№ 6 (126) XII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1902

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԸ ՄՈՒՇՈՒՄ

Մուշի ճգնաժամի լուրը առնելուն պէս՝ „Դրօշակ"-ի խմբագրութիւնը գիմումներ արեր զանազան տեղեր, շեշտելով, որ միմիայն եւրոպական գործակալների ներկայութիւնը կարող է արդելք լինել Սասունի դէմ՝ լաւած դաւերի իրագործման։ Մեր ֆրանսիացի բարեկամները, տեղեկանալով վիճակին, անմիջապէս արձագանք տուին և այդ նպատակով կարևոր գիմումն տեղի ունեցաւ։

Ահա թէ ինչպէս է հաղորդում այդ փաստը Temps լրագիրը, իր յունիս 16-ի համարում.

„Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դելկասէ երէկ ընդունեց պարլամենտի պատգամաւորներ՝ Դրնի Կօշէն, Կոմտ Ալբէրտ դը Միւն, Ֆրանսիս դը Պրէսանսէ եւ Ռէբէրտի, որոնք եկել էին խօսելու նրա հետ, այն ծանր մտահոգութեան մասին, որ պատճառում է Մուշի եւ շրջակայ հայ ազգաբնակութեան՝ կամտնաւոր զօրքերի եւ չէրքէզների այնտեղ տեղափոխելը։

Մինիստրը ծանօթացաւ մատնանիշ արած փաստերին, եւ խոստացաւ իր այցելուներին՝ ոչ միայն տեղեկացնել ձեռք առնելիք միջոցների մասին—որոնք անհրաժեշտ կը լինեն իրերի դրութեան տեսակէտից,—այլեւ յայտնեց, որ համաձայն հայերի յայտնած ցանկութեան, որոնք երկիւղի մէջ են ընկել ռուսաց հիւպատոսական գործակալ Տուումանսկու մեկնելու պատճառով, Կուղարկի վերոյիշած տեղը, ամենակարճ ժամանակամիջոցում, մի ֆրանսիական գործակալ, ժամանակաւոր կամ՝ մշտական"։

Այժմ ուրախութեամբ կարող ենք աւելացնել, որ ֆրանսիական մինիստրի խոստումը արդէն կատարւած է։ Ահա թէ ինչ են հաղորդում մեզ Պարիզից, յուլիսի 8-ից (յունիսի 26), կատարելապէս վստահելի մի աղբիւրից։

„Մինիստր Դելկասէ յայտնեց, որ ֆրանսիական գործակալը ուղարկւած է Մուշ և արդէն տեղ է հասել։ Հիւպատոսական ուրիշ գործակալութիւններ պիտի հիմնւին Ալէքսանդրէտտի և Էրզրումի միջև։

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԻՔՆԵՐԻՑ

Կար ժամանակ երբ խօսքը, ձեւը, արտաքինը մեր առաջադիմութեան տեսակէտից ունէին իրենց կարևոր նշանակութիւնը։

Վարդապետին „հայր սուրբ" չ'ասելով, „մեծ պասին" հաղորդութիւն չ'առնելով ու սովորութեան հակառակ „սիւրթուկ" հագնելով՝ մեր առաջին ազատամիտները յայտնում էին կենդանի բողոք ընդունւած ձեւականութիւնների և խղճի կապանքների դէմ։

„Հայրենիք", „Հայաստան" կրկնելով՝ հայ քարոզիչներն ու բանաստեղծները բաց էին անում մտքի ու պարտականութիւնների մի նոր, լայն ասպարէզ՝ օջախի շուրջը մեծացած և թայֆայական շրջանից դուրս չ'եկած հայի առաջ։

Խօսքն ու ձեւը այդ շրջանում արտայայտիչ էին որոշ գաղափարների, որոնք դեռ ևս չէին ընդունւած ընդհանրութեան կողմից և որոնց հաստատելը անհրաժեշտ էր հասարակական կեանքին նոր ուղի տալու համար։ Բայց այդ շրջանը անցաւ։

Ցիսուսական թեւականներից իվեր արծարծւած մտքերը տարածւեցին լայն խաւերում։

Այսօր ժողովրդի և նոյնիսկ կրօնականների մի ստւար մասը ծէսերին ու արարողութիւններին տալիս է միմիայն „սովորութեան" նշանակութիւն, սովորութեան, որը մի տեսակ տրադիցիայով կապում է մարդկանց իրենց ծնողների ու նախնիքների հետ։

Այսօր հայ հասարակութեան քիչ-շատ հասկացող տարրերը քաջ գիտեն, որ ոչ մշակի „արախչին", ոչ էլ Պարիզի „ցիլինդրը" դեռ ևս գրաւական չեն „առաջադիմութեան" և „լուսաւորութեան"։ Նրանք շատ լաւ ըմբռնած են, որ այդ մեծահնչիւն նշանաբանները առանձին արժէք չունին, քանի դեռ „ազատամիտները" խօսում ու ճառում են միայն, առանց անձամբ աշխատելու այդ գաղափարները կեանքի մէջ մարմնացնելու համար։

Սթափւելով, վերջապէս, իր դարևոր քնից, հայ ժողովուրդը զգաց—և զգաց շատ ծանր կերպով—որ Հայրենիք, Հայաստան, ազատութիւն պոռալով Հայրենիքի ցաւերը չեն լուծւի, Հայաստանը չի դրւի զարգացման պայմանների մէջ...

Բարձր գաղափարները իրականացնելու համար հարկաւոր է այժմ՝ ոչ այնքան խօսք, որքան գործ, օրինակ։ Կուլտուրական բարիքների „հարիսայից" ճաշակելու համար հարկաւոր է այժմ գդալ և գդալ ոչ „թղթէ", այլ „երկաթէ"։

Ահա այդ ըմբռնումն է պակասում մեր հասարակութեան լայն խաւերին։

Երբ ծանր աշխատանքի տակ ճնշւած հայ գիւղացին չի մտածում ոչ մի բանի մասին բացի իր ապրուստից, երբ դպրոցի յետեւից ու քաղաքի փողոցներից դուրս չ'եկած

մանրավաճառը հասարակական ուէէ գործի համար իր կոպէկն է տալիս՝ անունը տասը տեղ փառաբանելու պայմանով — դա այնքան էլ զարմանալի չէ։ Դրանք հասարակ „հողի մարդիկ են“, „խեղճ քրիստոնեաներ“։

Բայց ի՞նչ ասել մեր „հասարակութեան“ մասին, որը արտաքուստ ընդունելով կուլտուրական Եւրոպայի նիստ ու կացը, էապէս շարունակում է մնալ նոյն, ընտանեկան օջախը միայն ճանաչող ռամիկը, նոյն վաղեմի չարչին։

Հին սերունդը իր դատարկ քսակից, դառն քրտինքով աշխատած կոպէկներից „հոգու փրկութեան համար“ էլի տալիս էր մի բան „ազգին“՝ աղքատին, եկեղեցուն, դպրոցին։ Հիմիկւայ նորաբոյս քաղաքակրթուած „հասարակութիւնը“, որ նիւթապէս անհամեմատ աւելի ապահով է, որ փոքր իշատէ հասկացողութիւն ունի գիտութիւնների մասին և շփւում է Եւրոպայի հետ, ազատուել է „հոգու փրկութեան“ պահանջից, բայց չի իւրացրել ոչ մի նոր աւելի բարձր սկզբունք, աւելի վեհ գաղափար։ Փափուկ նիստ ու կաց և կոպէկանոց բարեգործութիւն — ահա նրա իդէալը — բնական հետևանք այն փթած, կիսասարկական ու նիւթապաշտ ուղղութեան, որ տիրում է հայերի ապրած վայրերում՝ Տաճկաստան, Ռուսաստան, Պարսկաստան։ Այդ փթած պայմաններն են, որ արգելում են ժողովրդին զատել արտաքինը էականից, նիւթական կարիքների հետ միասին զգալ հակում դէպի մտաւորն ու հասարակականը։

Քիչ է տարբերւում վերը յիշած „հասարակ մահկանացուներից“ և մեր „ինտելիգենտ“ անուանած տարրը։ Դէն ձգենք նախ ուսանողութեան այն մասը, որ մոռացած ամէն ինչ՝ զբաղած է թղթախաղով, բուլբարներում թրև գալով. դրանք բարոյական մեռելներ են և մեր և ուրիշների համար։ Մի կողմը թողնենք նաև ուսանողութեան այն փոքրամասնութիւնը, որը ունի կենդանի իդէալներ և կազմում է այսօր մեր մխիթարութիւնը։

Մեր ուսանողութեան և ինտելիգենցիայի մեծամասնութիւնը ներկայացնում է դեռ ևս մի անգոյն, թուլակամք մարմին — բնական հետևանք անօրմալ կրթութեան։ Դեռ մանուկ հասակում, կարգին չ՚իւրացրած մայրենի բառբառը, նա ստիպւած է հետամուտ լինել օտար լեզուներին։ Դրանց վրայ գործ դնելով իր ուժերի մեծագոյն մասը, նա հարկադրւած՝ իւրացնում է գիտութիւնը թռուցիկ կերպով, նրա մէջ չի արծարծւում հարկաւոր չափով սէր դէպի մտաւորը, ճշմարտութիւնը։

Եւ այդպէս թերի պատրաստութեամբ ընկնելով օտար աշխարհ, նա աւելի ևս կտրւում է հայրենի հասարակութիւնից, նրա պահանջներից։ Ազատ, լայն ընտրութիւն անելու այս կամ այն մասնագիտութեան մէջ, նա տարիների ընթացքում ջանք չի գործ դնում լրացնելու մանկութեան շրջանում ստացած անօրմալ կրթութեան պակասները, նա չի կարողանում օգտուել գիտութեան բարիքներից այնպէս, որ կարողանայ օտարի ստեղծածից հնարաւորը պատւաստել հայրենի հողի վրայ։

Զինուած հրապարակական ժողովների և թռուցիկ հրատարակութիւնների թեթև էրուդիցիայով ու ածանագին ազատամտութեամբ, մեր այդ կարգի ջահէլները սիստէմ են դարձնում ճոռոմաբանելը կամ թէ ամենաշատը՝ մտածում են ապագայում հայի արագաշարժ լեռնային ձիու վրայ յարմարեցնել հօլլանդական բեռնաւորի լուծը։ Տհաս մարդկանց յատուկ մեծամտութեամբ նրանք մրտրակում են ուրիշներին և պահանջում առանձին ուշադրութիւն դէպի իրենց կարծիքը, առանց մտածելու, որ այդ ուրիշներն էլ ունին իրենցից ոչ պակաս արժանաւորութիւններ և իրաւունք փոխադարձ ուշադրութեան։

Այդ ուղղութեան կեղծիքը երևան է գալիս՝ հէնց որ ուսանողական, խօսելու շրջանից մեր „ազգասէրը“, „գաղափարական գործիչը“ մտնում է կեանքի, գործելու շրջանը. հէնց որ նա առնում է նիւթապէս ապահով վիճակի ճաշակը, կամ մի քիչ տրորւում է իր դաւանած գաղափարների համար, իսկոյն առաջ են գալիս „ընտանիք“, „հասակ“, „հասարակական ծանր պայմաններ“...

Երէկւայ առաջադէմը դառնում է „հասարակ մահկանացու“, ձուլւում է անգոյն ամբոխի հետ։ Նրա հասարակական ամենամեծ գործը „բարեգործական“ ժողովներում մասնակցելն է, կամ թէ այս կամ այն ազգայնի մահւան առթիւ հոգեհանգիստ կատարելը։ Զէ՞ որ այդ միջոցով նա ամբողջ աշխարհին իմաց է տալիս իր գոյութեան և „գործունէութեան“ մասին...

Ցուցամոլութիւնը մեր ամենամեծ սիստերից մէկն է։ Խօսքը առանց կենդանի գործի այլասեռում է մեր հասարակութիւնը։

Միմիայն խօսքը, համոզմունքը, գաղափարը դեռ ևս գրաւական չեն մեր կեանքի առաջադիմութեան համար։ Համոզմունքի ու գործի մէջ կայ մի նեղ, բայց խորը անդունդ, որ պէտք է անցնել։

Ինչպէս որ կառքը փոխադրելու միջոցին ամենամեծ ջանքը գործ է դրւում նրան տեղից շարժելու վրայ, այնպէս էլ հասարակական կեանքում համոզմունքից դէպի գործ անցնելու համար անհրաժեշտ է առանձին նախաձեռնութիւն և վճռողականութիւն։ Առանց այդ վճռողականութեան ոչ մի ընդհանրացած գաղափար կեանքի համար արժէք չ՚ունի, ինչպէս արժէքից զուրկ է այն շոգենաւը, որի մէջ կայ տաքացած ջուր, բայց չկայ եռացած շոգի։

Ծամը չէ՞ հասել արդեօք, որ մեր վարքերի մաքրութեան փարաջաւոր ու անփարաջայ քարոզիչները մի քիչ էլ իրենց անձնական կեանքով տային պահանջած մաքրութեան կէս օրինակը և մեծ խօսքերի հետ միացնէին գէթ փոքրիկ գործեր։

Դա այն մինիմումն է, որ պահանջւում է իւրաքանչիւր մի պարտաճանաչ հայից...

Մեր ինտելիգենցեայի չնչին մասն է միայն, որ ըմբռնել է հայ կեանքի այդ հասունացած պահանջը, որ ունի համոզմունքի հետ միասին և կամք՝ խօսքը գործի վերա-

ծելու։ Այսօր նա ապրում է ժողովրդի հետ և քիչ ճառելով, բայց զգալի զոհաբերութիւններով իրականացնում է կեանքի մէջ իր պաշտած սկզբունքները։ Նրանցից լաւագոյնները դրել են արդէն Հայրենիքի Սեղանի վրայ իրենց մատաղ գլուխները…

Նրանք թող լինեն մեր ուսուցիչներն ու առաջնորդները։

Ն Ւ Է Ր Ը

Անուշաբոյր թարմ ծաղիկներ
Հայ օրիորդն ինձ ընծայեց,
Հեռու երկրից անկեղծ նուէր
Իր քոյրերուն ուղարկեց։
Ասաց՝ — „Տո՛ւր այդ փունջն և ասա,
„Թէ չի անցնիլ էլ երկար
„Կուռի դաշտում հարս ու փեսա
„Կը հանդիպինք մենք իրար“։
Կռիւ կուտանք, կռիւ արդար
Կռիւ վերջին, ճգնական.
Գոտեպնդուած հերոսաբար
Ու կազատենք Հայաստան։
Դուրս ցայտեցին արցունքներ տաք
Իմ աչքերից այդ պահին.
Լսում էի կարծես անյագ
Ազատութեան պատգամին։
Ու երդւեցի տանել փունջն այն
Դէպի կարմիր Հայաստան,
Ուր վիրաւոր հայերն համայն
Սպասում են փրկութեան։

ՀԱՐՈՒԽ-ՓԱԼԱՔ

23 մարտ 1902

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄԵՐՍԻՆԷՆ

28 մայիս 1902

Գարնան հետ տաճկական վայրագութիւններն աւելի կը սաստկանան կարծես։ Ցխուր լուրերու շարքերը կը հասնին ամէն կողմէ։

Ատանայէն սկսենք։ Անկէ ամիս մը առաջ Կարապետ Ճէքէճեանը, բնիկ ատանացի, Միսիս կերթայ առևտրական գործերի համար (ինք շրջուն փերեզակ մըն էր)։ Ձին արծելու համար Միսիսէն քառորդ ժամ հեռու դաշտ մը կերթայ, հոդ ձին կը ձգէ և ինքն ալ անդին քիչ մը հեռու կը նստի։ Անդիէն երկու ձիաւոր կուգան և ձին կը քաշեն կը տանին՝ իբր թէ իրենց սեփականութիւնը եղած ըլլար։ Կարապետը կը պոռայ. „ո՞ւր կը տանիք իմ ձիս“, և կը վազէ դէպի այս կատղած գազանները։ „Խնզըր կեավուր, շունա պագ, Նասըլ պաղըրըյօր“ (խոզ կեավուրին նայէ, ինչպէս կը պոռայ) կըսեն և ռէվէլվերով ծանրապէս կը վիրաւորեն խեղճը, և ձին առնելով կը տանին, ձգելով Կարապետը արիւնաթաթախ վիճակի մը մէջ։ Քանի մը ճամբորդներ զինքը այս վիճակի մէջ տեսնելով Միսիս կերթան և կառավարութեան լուր կուտան։ Կառավարութիւնը տեղէն չի շարժիր մարդասպանները գտնելու համար։ Կարապետն ալ Ատանա կը փոխադրուի մահամերձ վիճակի մը մէջ ուր կը մեռնի նոյն գիշերը։

Սիս.—Տուրքերը սաստիկ խստութեամբ կը հաւաքուին, այնպէս որ հազար ղուրուշնոց ապրանք մը յիսուն ղուրուշի կը ծախուի տուրքերը գանձելու համար։ Իգմիրլի օղլու անուն հայու մը 300 ղրշ. պարտքին համար 5,000 ղուրուշ արժողութեամբ այգին կառավարութիւնը ծախել տուած է։

Հաճըն. — Գայմագամի լրբութիւնները ալ չափը անցած են։ Այս լկտին փորձանք մըն է հաճընցիներուն համար, ամէն օր նոր չարութիւններ կըստեղծէ։ Հայ հարուստներու դէմ խիստ հալածանքներ սկսած է և խեղճերը շուարած մնացեր են և ինչ ընելնիքնին չեն գիտեր։ Միշտ նոր զրպարտութիւններ, միշտ նոր հալածումներ. մանաւանդ իր բոլոր թոյնը կը թափի Ռէճէպեան ընտանիքի վրայ։ Ռէճէպեանը Հաճընի հարուստներէն մին է, ունի երեք զաւակ, որոնք Մերսին կը բնակին այժմ, մին բժիշկ և միւսները դեղագործ։ Տօքթօր Ռէճէպեան Փարիզ ցուցահանդէս գնաց և անկէ ալ Ամերիկա. վերադարձին իր եղբայրներն ալ մէկտեղ բերած էր, որոնք Ամերիկայի մէջ դեղագործութիւն կուսանէին։ Մերսին հասնելուն Հաճընի այս անպիտան գայմագամին տեղեկագրի մը վրայ, կառավարութիւնը բանտարկեց Ռէճէպեան եղբայրները. 2-3 ամիս բանտարկութենէ վերջ արձակուեցան այն պայմանաւ որ Մերսինէն պիտի հեռանան։ Բայց Հաճընի գայմագամը դարձեալ հանդարտ չկեցաւ և շարունակեց միշտ նոր զրպարտութիւններ տեղացնել Ռէճէպեան ընտանիքին վրայ, անանկ որ կառավարութիւնը այս օրերս Հաճընէն բերել տուաւ Ռէճէպեան հայրը և ատոր ազդարարեր է որ Ատանա պիտի մնայ և առանց կառավարութեան հրամանին ուրիշ տեղ չպիտի երթայ։ Գալով Ռէճէպեան եղբայրներու՝ կառավարութիւնը տօքթօրին կրկին հրամայած է որ Մերսինէն դուրս բնաւ չելլայ։ (Որովհետև տօքթօրին երբեմն կը թոյլատրուէր շրջակաները երթալ բժշկելու համար)։ Դեղագործներուն ալ ազդարարուած է որ Ամերիկա վերադառնան Թիւրքիա չմնան։

Մարդկային խիղճը մանաւանդ կ'ապստամբեցնեն այս գայմագամ՝ ըսուած հրէշին իգործ դրած շատ մը կուսապղծումները, առևանգումները։ Չենք գիտեր թէ հաճընցիները ի՞նչպէս կը հանդուրժեն այսպիսի գազանութիւններուն։

Գայմագամը ամէն օր զօրով նոր հարսեր և կոյս աղջիկներ բերել կուտայ եղեր և անոնց վրայ իր գազանային կիրքերը կը յագեցնէ եղեր։ Հետևեալ իրողութիւնը շատ խօսուն է ըստ ինքեան։

Գայմագամը ծառայ մ'ունի եղեր իր քովը։ Այս ծառան (հայ) կ'ամուսնանայ, ամուսնութեան առաջին գիշերը գայմագամն է որ փեսի պաշտօնը կը կատարէ։

Գայմագամը իր կեղեքումներով կը գերազանցէ իր միւս պաշտօնակիցները։ Տուրքերը այն աստիճան խստութեամբ հաւաքել կուտայ որ երկու հազարի չափ կալուած ծախել տուած է իր պաշտօնավարութեան շրջանին մէջ։

Հարիւր ղուրուշնոց ապրանք 10 ղուրուշի ծախուած է։ Մտածեցէք որքան թշուառութեան մէջ պիտի ըլլայ Հաճընի խեղճ ժողովուրդը։

Կառավարութիւնը խարբերդցի, տիգրանակերտցի հայերը չձգեր որ իրենց տեղէն ուրիշ տեղեր երթան

աշխատելու համար։ Խարբերդցիներ ամէն տարի Ատանա կուգային աշխատելու, բայց այս տարի բնաւ չեկան. քանի մը հատ միայն եկած են քիւրդերու հետ։ Կառավարութիւնը կուզեր նաև զէյթունցիները, ֆռնուզցիները և կապանցիներն ալ իրենց տեղը պահել, բայց չյաջողեցաւ։ Զէյթունցիները բաւական թւով Ատանա եկած են աշխատելու համար։

Ահա մեր շրջականներուն վիճակը. երկրի ներսերէն հասնող լուրերն նոյնքան և աւելի վրդովեցուցիչ են։ Տիգրանակերտէն առնուած ստոյգ տեղեկութիւններուն նայելով այն տեղին վիճակն ալ շատ ողբալի է։ Վերջերս 2 հայ սպաննուած են, որոնցմէ մին Չէքէրկէ Օհաննէս անուն միջնորդ (սիմսար) մը՝ սպաննուած գտնուած է քաղաքին պարիսպի փլատակներուն մէջտեղ։ Միւսը որբեւայրի կնկան մը մէկ հատիկ զաւակ 24 տարեկան Մկրտիչ Տէրունեան անունով երիտասարդ մըն է, որու սպանութիւնը հետեւեալ ցաւալի պարագաներու մէջ տեղի ունեցեր է։

Յիշեալ դժբախտ երիտասարդը իրեն հետ տարեկից երկու ընկերներով քաղաքին հիւսիսային կողմը մէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Հայեղիկ գիւղը երթալու ատեն ճամբու վրայ գտնուող Թիւրք գիւղի մը առջև, ուրկէ անհրաժեշտաբար պէտք էր անցնել, յարձակում կը կրեն հինգ զինեալ Թիւրքերէ։ Տղաքները սարսափած փախուստ տալ կուզեն։ Անոնցմէ մին Թիւրք մոլլային տունը կը նետէ ինքզինք ու կազատի. միւսը պարտէզներու խիտ ծառերու տակ ինքզինքը անյայտ կ'ընէ, իսկ երրորդը խեղճ Տէրունեան, որ բաւականաչափ քաջասիրտ երիտասարդ մըն է եղեր, դիմադրել կուզէ։ Չգիտցուիր որ մէջերնին պայքարը որչափ կը տեւէ, հինգ Թիւրքերը մէկտեղ շատ մը դաշոյնի հարուածներով կըսպաննեն զայն և դիակը կը նետեն գիւղի արեւելակողմէն վազող Տիգրիս գետը։ Հետեւեալ օրը ընկերները քաղաք վերադառնալով եղելութիւնը կիմացնեն անբախտ Տէրունեանի մօրը, որը իր կարգին դիմում կ'ընէ կուսակալին։ Կուսակալը 30 հեծելազօրք կը ղրկէ դէպքին վայրը. 18 քիւրդեր կը ձերբակալուին. բայց սպաննուողին դիակը մէջտեղ չ'ելլեր։ Կրկին դիմումներ կ'ըլլան կուսակալին, որը խիստ հրամաններ կուտայ Ալայ պէկին որ անպատճառ տղուն դիակը պիտի գտնէ։ Երկրորդ անգամին դէպքին վայրը եղած այցելութեան մէջ մեռնողին գուլպաները, գօտին և կօշիկները կը գտնեն, ատկէ կ'եզրակացուի թէ դիակը գետը նետուած է՝ վալիին հրամանով գետին գնացքի վար մարդիկներ կ'ուղարկուին, որոնք վեց ժամ հեռաւորութեամբ Պիսմիլ անուն Թիւրքմէն գիւղացիներու գիւղին առջև կը յաջողին բռնել դիակը, ոտքերը, ձեռքերը ետեւը կապուած և վրան շատ մը դաշոյնի հարուածներ ստացած։

Աւելի խուլ անկիւններէն Ուրֆայէն հասնող նուաղոտ ձայները շատ սրտաճմլիկ են։ „Կենդանի էակներու գերեզմանատուն“ յորջորջելու արժանի տառապանքի այս քաղաքին մէջ հայերու վիճակը սրտակեղեք և աղեխարշ է։ Ամէն ժամ մի տեսակ ցաւ. ամէն վայրկեան կոտորածի, սպանութեան վախ ու սարսափ։ Թիւրք մոլեռանդութիւնը այս դժբախտ քաղաքին մէջ այնքան կատաղութեան հասեր է որ հէնիչէրիութեան օրերու կարելի է հազար անգամ ա՛խը քաշել, այն օրերուն նախանձիլ։ Ամենէն վայրագ, ամենէն կատաղի և միանգամայն փանաթիք Թիւրքերը կազմեր են հոն մի տեսակ հէնիչէրական—ըսենք—կազմակերպութիւն։ Իրենց հրամանատարութեան, իրենց պաշտպանութեան տակ առած և իրենց ազդեցութեան շրջանին մէջ բաժնած են քաղքին էն սրիկայ, էն բարբարոս խուժանը, որոնք իրենց քմահաճոյքին համեմատ կը կեղեքեն, կը կողոպտեն և իհարկէ կըսպաննեն արդէն արիւնաքամ ժողովուրդը։ Կառավարութիւնը գաղտնապէս կը դրդէ և կը քաջալերէ զանոնք։ Արտօնած է ընել ամէն ինչ մի պայմանով որ ճարպիկ գործեն և իհարկէ եթէ մարդասպանութիւն ալ ընեն աշխատին որ մութին մէջ կատարեն, ականատես վկաներու բացակայութեանը։ Նոր-հէնիչէրիները յաճախ վրան-բաց վայրագութիւններու առջև ալ չեն ընկրկիր։ Նախ որ իրենց կռնակ ունին կառավարութիւնը, իրենց բարի-խրատտուն, և երկրորդ գործուած ոճիրներու ականատեսները եթէ Թիւրք են, անկարելի է որ Թիւրքին ի՛նաս վկայութիւններ տան, իսկ եթէ գործադրուած վայրագութիւնները տեսնողը հայու աչքեր են, իրեն ալ նոյն վիճակին սպասած ըլլալու սարսափէն շանթահարուած ակամայ ստիպուած է իր կենդանի աչքերովը տեսածները ուրանալու։

Վերջնական բնաջնջումի վճիռը հագած այս կիսաւեր քաղաքէն պահ մը մեր աչքերը դարձնենք ուրիշ մի քաղաքի, Կեսարիոյ վրայ։ Այս քաղաքը որ 95-96-ի Մեծ-Աղէտի ատեն նա ալ իր կարգին քամեր էր դառնութեան բաժակը, այն սև օրերէն իվեր գէթ համեմատաբար մի քիչ աւելի հանգստութիւն կը վայելէր։ Եւ ահա այնտեղի մի քիչ պայծառ հորիզոնն ալ կը մթնի, մոնկոլութեան շղթայուած վիշապը կամաց կամաց գլուխ կը վերցնէ և իր գրգռուած ճիւաղային ախորժակը յագեցնել կուզէ։ Սարսափի այն սև օրերու վրայէն որչափ ալ վեց-եօթը տարիներ սահած ըլլան՝ կեսարացիք երբէք չեն կարող մոռանալ իրենց գազան Մէմէտներուն միջև, դէպքէն քիչ վերջը, դարձած սա հետեւեալ խօսակցութիւնը, որուն սարսռազդեցիկ նշանակութիւնը իրենք, կեսարացիք միայն կրնան ըմբռնել. — „Օլա՛ն Մէմէտ, պազլավանըն ղըըճըղընը եէտիւք, օրթասը ղալըը“, այսինքն տօ՛ Մէմէտ, կարկանդակին եզերքները միայն կրցանք ուտել, մէջտեղը մնաց։

Այս խօսքերով Մէմէտները իրարու սիրտցաւ զղջումներ կը յայտնէին որ 7-800 կեավուր միայն կրցեր էին սպաննել փոխանակ մի քանի հազարներ կոտորելու, կամ հայ արու սեռը բոլորովին բնաջինջ ընելով հայ կիներուն տիրանալու։ Զղջացեր էին որ շուկաներու ապրանքները ամբողջութեամբ և տուներուն մի մասը միայն կրցան թալնել, մինչդեռ տուներու հարստութիւնը անձեռնմխելի մնացել էին։ Զղջացեր էին նաև որ 50-60 անմեղ կոյս աղջիկներ միայն կրցան լեռները տանիլ, փոխանակ հայութեան ամբողջ կոյսերը և գեղեցիկ կիները իրենց հարէմներու մէջ վայելելու։ Եւ վերջապէս զղջացեր էին որ իրենց գործադրած վայրագութիւնները իրենց գազանային ճաշակներուն յարմարելէ դեռ շատ հեռու էին։ Եւ տարիներ տարիներու կը յաջորդէր սպասելով անհամբեր այն ցանկալի օրուան, ուր „Աստուծոյ շուքը“ շուքին մէջ իրենց աչք-թարթիկ մըն էր, և իրենք ալ իրենց կարգին յանուն միսիւլմաններու ալլահի և „վերջին օրերու մեծափառ մարգարէի“ պ է ս մ է լ է մը քաշէին վայելելու կարկանդակի միջուկն ևս։

Կ'երեւի թէ վերջերս այն տեղի Մէմէտներուն աչք-

խաղ մը եղած է, բայց չենք գիտեր որ ինչո՞ւ կարկանդակին եղերքները միայն կրցեր են արծել: Ահա մասնաւորներու եկած լուրերէն կը քաղեմ հետեւեալ ստոյգ տեղեկութիւնները:

Ասկէ մի քանի շաբաթներ առաջ Թիւրք սրիկաները իրենց գազանային կիրքերը յագեցնելու համար բռնի կը վերցնեն 15-16 տարեկան հայ պատանի մը, որ բնութենէն ֆիզիքական գեղեցկութեամբ օժտուած ըլլալու յանցանքն ունի եղեր: Տղուն ազգականներէն Գ. Գունդագձեան անուն անձը, որ քաղքին հարուստներէն և երեւելիներէն է եղեր, դիմումներ կ'ընէ կառավարութեան մօտ՝ անբախտ տղան գազաններու ճիրանէն ազատելու համար: Կառավարութիւնը, հաւատարիմ իր Մէմէտներուն հանդէպ ուխտած բարեացակամութեան, կամ ո՞վ գիտէ իր գաղտնի տուած հրահանգներուն խոստմնապահ, այնքան ալ սիրտ չ'ըներ շուտով տեղէն շարժելու: Դիմումներ դիմումներու վրայ կը տեղան կառավարութեան, և վերջապէս վեց օր վերջ տղան իր ծնողքներուն կը յանձնուի աննկարագրելի վիճակի մը մէջ: Մէմէտները կը կատղին Գունդագձեանի դէմ, որ իրենց խաղաղ վայելումը խանգարեց, կառավարութիւնն ալ իր կարգին, որ առանձնաշնորհեալ տարրին արարքներուն դէմ սորուկ տարրը դեռ բողոքելու յանդգնութիւնը կունենայ. և ահա գազանութեան նշդրակը կուղղեն ուղղակի խեղճ մարդուն սիրտը, որպէս զի ուրիշ այդպիսի պարագաներու մէջ սիրտը չկրնայ բաբախել և լեզուն քաշելու խոհեմութիւնը ունենայ: Նորա գեղեցիկ մէկ աղջիկը որ դեռ վեց ամիսներէ իվեր հարս է գնացեր Ա. Պարութճեանին տունը, մի քանի ազգական կիներով բաղնիք գացած ատեն օր-ցերեկին կ'առեւանգուի ափիոնուշտ գազաններուն կողմէ, իրենց տանը դռնէն մի քանի քայլ անդին: Օրիկայ Թիւրքերը սուրերը մերկացուցած կըսպառնան անմիջապէս սպաննելու այն որ կը յանդգնի իրենց վրայ գալ և խեղճ նոր հարսն իր և իրեն ընկերակից կիներուն աղաղակներուն մէջ բռնի կը տարուի Թիւրքերէն: Անբախտ հայրը գարձեալ կը վազէ կառավարութեան դուռը, բայց աւանդական „էֆէնտիմ, կ ե լ տ ի հ ա ո վ. կէլթիհաով“, չորս օր յետոյ միայն կարելի կ'ըլլայ հարսը գազաններուն ձեռքէն ազատել, մինչդեռ սրիկաներու ետեւէն գացող ժանդարմները քաղքին եզերքէն անդին անցած չեն: Աւելիին վրայ պէտք է լռել, վասն զի կը վախնանք որ մեր հանգստութիւնը և ապահովութիւնը հանդիսաւորապէս ապահովող եւրոպական դիւանագիտութիւնը „ապահովութիւն“ բառով այդ բաները հասկընալ ուզեր է:

Յ. Գ.—Վերջին պահուն ստոյգ աղբիւրէ մը կիմանանք թէ անցեալ շաբաթ Մարաշէն, Զէյթունէն և Հաճընէն գաղտնի կերպով զինուորներ ղրկուած է Պուգուր և Չիվիլձի գիւղերուն վրայ իբր թէ յեղափոխականներ փնտռելու: Շատ մը խուզարկութիւններ, բանտարկութիւններ և յափշտակութիւններ տեղի ունեցեր են: Կառավարութիւնը Զէյթունի շուրջ գտնուող բոլոր Թիւրք գիւղերու զէնք, փամփուշտ և վառօդ բաշխեր է: Թիւրքերուն մէջ խորհրդաւոր փսփսուկներ կը դառնան եղեր, հետեւանքը իհարկէ հայու համար լաւ նշաններ չեն:

Երբ կը գոցէի նամակս այս վայրկենիս ուրիշ ստոյգ աղբիւրէ մը կիմանամ մի դէպք, որու վայրենիներու ալ վերագրելը անարդարութիւն պիտի ըլլար: Վերեւ պատմած եմ Կեսարիայի մէջ հայ պատանիի մը Թիւրք սրիկաներէն յափշտակուիլը ևն: Թիւրք կառավարութիւնը անոնցմէ մէկ քանիները կը բռնէ և կը բանտարկէ: Հարցաքննութեան պահուն Թիւրքերը կուրանան տղուն վրայ իրենց կատարած գազանութիւնը, հետեւաբար հարկ կը դատուի բժշկական քննութեան մը ենթարկել և հետեւանքի մասին ռաբօր մը տալ: Տեղւոյն բժիշկները, որոնց մեծամասնութիւնը հայ են, իրենց վախէն չեն ուզեր տեղեկագիր մը տալ և խուսափողական ընթացքներու կը դիմեն: Բայց կը գտնուի մէկը, ժողովուրդին ամենուն սիրելի, ազնիւ և պատուաւոր բժիշկ մը, Նահապետ էֆէնտի Թափիպեան չկրնար այս բացարձակ և յայտնի ճշմարտութեան դէմ աչք գոցել և տղուն վայրագօրէն բռնաբարուած ըլլալու մասին տեղեկագիր մը կուտայ: Գիտէ՞ք, կրնա՞ք երեւակայել իսկ, ո՛վ քաղաքակիրթ մարդկութիւն, թէ ի՞նչ կ'ըլլայ աչքերու ցատկող ճշմարտութեան մը հիմնուած տեղեկագրի մը հետեւանքը.— խեղճ տօքթօրը, 50-55 տարիներու հասակի մը մէջ, նա ալ իր կարգին Թիւրք սրիկաներէն բռնի կը վերցուի և ..... Ի՞նչ հարկ խօսելու թէ երբեք չպիտի գտնուի բժիշկ մը, որ սիրտ պիտի ունենայ ականատես ըլլալ իր ծեր պաշտօնակցին կրած սարսափելի անարգանքին, անոր ենթարկուած քստմնելի ոճրի նկատմամբ տեղեկագիր մը պատրաստելու: Ահա Թիւրք խուժանը. ահա Թիւրք կառավարութիւնը: Ձեզի, ձեր խղճին, ձեր մարդկային զգացումներուն դիմում կ'ընենք ո՛վ քաղաքակիրթ աշխարհի բժիշկներ, պահ մը դարձուցէք ձեր աչքերը Թիւրքիա ըսուած դժոխք աշխարհին վրայ և տեսէք թէ ի՛նչ գարշելի ոճրագործութեան զոհ կերթայ ձեր յարգելի մի ծեր պաշտօնակիցը: Ձեզ կը դիմենք, ով ազատ երկիրներու տիկիններ և օրիորդներ, խիղճ ունեցէք ձեր հայ քոյրերուն, հայ կոյսերուն բարբարոսներու միջոցաւ բռնաբարեալ պատիւներուն վրայ և ձեզ, ձեզ կը դիմենք ով ամբողջ մարդկութիւն, ալ հերիք է որ քաղաքակրթութեան այս աղտը դեռ երկար աղտոտէ դարուս պատմութիւնը: Ալ ամօ՛թ է, նախատի՛նք է:

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՕՆԷՆ

—

2 յունիս 1902

Մի քանի տարւայ ընթացքի մէջ դիզուած և ահագին գումարներու հասած տուրքերը գանձելու համար, կառավարութիւնը ծախեց գիւղացոց կենդանիները՝ կով, եզ, ոչխար ևն ու իրենց վերջին ապաւէնը, հողը: Ով որ կը տրտնջայ, կամ իր չքաւորութիւնը կը մատնանշէ, անլուր տանջանքներու կ'ենթարկուի: Իբր օրինակ մէջ բերենք Նոխածանա, Իլէ, Վերանայ գիւղերը:

Վերանայ, որ քսան տուն ունի, աղքատ գիւղ մ'է, ուէ կարեւոր բերք չունենալուն համար: Իր երկրագործական արտադրութիւնները հազիւ վեց ամիս կը բաւէ: Վերջին օրերս հարկահաւաքները հոս ալ գալով՝ դէպքէն առաջ ու յետոյ մնացած տուրքերը պահանջեցին. չտրուելու պարագային կըսպառնան ծախել, ուրիշ գիւղերու նման, անոնց ունեցած չունեցածը: Խեղճ գիւղացիք, ի՞նչ ընեն, սկսած են իրենք իրենց ձեռքով ծախել օրական աղքատիկ պարէնը հայթայթող իրերը: Եթէ չի ծախեն ու հարկահաւաքները չի գոհացնեն, կառավարութիւնը պիտի ծախէ:

Իլէ 15 տուն ունեցող գիւղ մ'է։ Մէկ երկու ամիս առաջ այս գիւղի բնակիչք հարկահաւաք պաշտօնեաներէ ու զինուորներէ անխնայ դանակոծուեցան և քստմնելի տանջանքներու ենթարկուեցան։

Կակոսեան Յովակիմ անուն մարդուն թևերը բանալով բրիչի կոթ մը կանցնեն անոր վերարկուին թևերուն մէջէն ու կը ծեծեն զայն և այդ ձևով ժամերով կը պահեն։ Ուրիշ դէպք մը. Կակոսեան Յարութիւնին դարձեալ թևերը բացած վերարկուէն կը դամեն տախտակի մը ու այդպէս կը պահեն ամբողջ հինգ ժամ։ Ասոնց նման տանջանքներ կը կրեն շատ ուրիշներ ալ...

ՆԱՄԱԿ ԿԻՐԱՍՕՆԷՆ

4 մայիս 1902

Թուականէս 2-3 ամիս առաջմեզի անյայտ պատճառներով (ոմանք կ'ըսեն թէ վնասակար գրութիւններ ձեռք անցած ըլլան) հոս գօմիսիօնճիութեամբ պարապող Գարեգին Հօղանեան անուամբ Շապին-Գարահիսարցի երիտասարդ մը ձերբակալուեցաւ, որուն յաջորդեց թէ հոս թէ Գարահիսարի և թէ ուրիշ վայրերու մէջ բազմաթիւ ձերբակալութիւններ, որոնց թիւը 26 ըլլալ կը կարծուի։ Ձերբակալուած հայերը բաւական ատենէ ի վեր Ամասիա ղրկուած են, բացի Գ. Հօղանեանէ. անոնց մէջ կը գտնուին եղեր Մարզուանի Անաթօլիա գօլէճին երեք բրօֆէսօրները, բայց շուտով արձակուեր են։ Միւս բանտարկեալները կը մնան դեռ։ Կը յուսացուէր որ Զատկի առթիւ ընդհ. ներում մը շնորհուի, բայց բան մը չեղաւ։ Հօղանեանը դեռ այստեղ կըսպասէ, իր վիճակի մասին բնաւ տեղեկութիւն մը չառնուիր։

Հայերը նոր ջարդի վախ մ'ունեցան ամիս մը առաջ։ Կ'ըսուէր թէ Թիւրք ժողովուրդը օրըստօրէ նոր առիթի մը կըսպասէր կոտորածի յարձակում մ'ընելու համար։ Մի քանի Թիւրքեր իրենց յոյն բարեկամներուն խոստովաներ էին իրենց դիտաւորութիւնը՝ նոյնիսկ այս անգամ տղաքներու չխնայելու վայրագ փափագնին։ Ըսուեցաւ նաև, իբր թէ կառավարութիւն զայդ իմացած և մի քանի պարագլուխ թիւրքերը բանտարկելով անխուսափելի կոտորածի մը առջևը առած ըլլայ։

Այս լուրերը որքա՞ն ճշմարտութեան դրօշմը կը կրեն, չենք գիտեր։ Սակայն չենք կարծեր, որ ժողովուրդին այնքան իրական վախ ազդող և համոզումով խօսող տարաձայնութիւններ անհիմն եղած ըլլան։

Թիւրք գիւղացիներու մէջ կատարելագործեալ զէնքեր բաշխուեր են, անշուշտ մաքսանենգութեամբ փախցուած զէնքեր։ Արդէն իբր ջարդի պարագլուխ բանտարկուողները զէնք փախցնողներն են, որոնք խոստովաներ են թէ սուլթանին կամքին առաջ պատրաստ գտնուելու համար կը գործեն այդպէս։ Այդ մասին կառավարութեան կողմէ տեղեկագրեր է կեդրոն և անկէ հրաման եկած է որ բոլոր զէնքերը ժողուեն և անհնազանդները պատժուին։ Սակայն դիւրին չէ գիւղացիին զէնքը գտնել. մինչև ցարդ հազիւ 10-15 զէնք գտնուեր է։

Վերջերս հայերու և Թիւրքերու, մանաւանդ հայերու համար օտար նաւու մէջ ճամբորդելը բոլորովին արգիլուած է։ Նոյնիսկ մերձակայ քաղաքներ Տրապիզօն, Օրդու չեն թողուր։ Անցագիր հաներն ալ այնքան տաժանելի և բազմածախս եղած է որ մարդ կը յուսահատի։ Կեանքը օրըստօրէ անտանելի կը դառնայ։

Թիւրք պաշտօնարաններու ամենաստորին գրագիրը՝ իր քէֆին ժամերով սպասել կուտայ պզտիկ ստորագրութիւն մը գրելու, կամ կնիք մը զարնելու համար։ Այսքան դժուարութիւններով և քմահաճոյքներով ձեռք առնուած անցագիրը ունենալով հանդերձ՝ Թիւրք նաւահանգիստներէն մէկէն միւսը հասնող մի հայ անվերջ ձևակերպութիւններէ անցնելու համար օրերով կը տանջուի։

Տրապիզօնի առաջնորդական տեղապահ Պապաեան Եղնիկ վարդապետ ցածոգի և կառավարութեան անարգ գործիք մըն է. թաղականին, հոգաբարձուին, ուսուցչին և ուրիշներուն սպառնալիքներ կ'ընէ կառավարութեան ձեռքը յանձնելու։

Արտաքին թշնամիներէն զատ այսպիսի ներքին թշնամիներու պատճառած դժբախտութիւնները անհամար են։

Ց. Գ. — Երէկ ապրիլ 22-ին Հօղանեան խեղճ երիտասարդը ռուսական նաւով ընդ հսկողութեամբ Տրապիզօն ղրկուեցաւ, չենք գիտեր ինչ պիտի ըլլայ ասոր հետևանքը։

ՆԱՄԱԿ ՍՂԵՐԴԷՆ

12/25 ապրիլ 1902

Սիրելիս ***

Տեսնելով թէ կեանքիս սպառնացող վտանգները հետզհետէ կը բազմանան, անխուսափելի մահէ մ'ազատելու համար 20 օր առաջ փախած Սղերդ եկած եմ։ Ընտանիքս, գոյքերս չկրցայ հետս փոխադրել և թէ այս 20 օրուան մէջ ամէն ջանք ու ճիգ և հնարք մտածելով ի գործ դրի ընտանիքս և ունեցածներս հոս Սղերդ փոխադրելու համար, բայց չյաջողեցայ։ Այս առտու քեռիս տղան պետօն Այնտուր գիւղէն հոս գալով ինձ գուժեց մեր տան կողոպտուիլը։ Ապրիլ 5-ին գիշերը Էօմէրէ-Խաքանի տղան Հասան և եղբայրը Տէրվիշ մի քանի չարագործներով մեր տունը կը կոխեն. կինս և Մահտեսի Պետրոսին կինը լաւ մը կը ծեծեն, այս առթիւ տղաս ամբողջ օր մը նուաղեալ կը մնայ, Սարմէին գլուխը ջախջախած են և խօսուածներուն համեմատ ստացած վերքերէն պիտի մեռնի։ Կիներուն օղակները, գլխու սև փուշիները (ծածկոյթ) կը յափշտակեն, ինչպէս նաև մեր 18 ոչխարները և 8 էգ ձագերը։ Վերջապէս մեզ անպատմելի չարիքներ և վնասներ հասուցեր են։

Այսօր տեղւոյս առաջնորդ հօր գիտութեամբ բոլոր պիտի տանք կառավարութեան, խնդրելով որ մեր ընտանիքը ընդ հսկողութեամբ ոստիկանաց Սղերդ փոխադրուին։ Մեր հողակալածներն ալ գրաւելու սպառնալիք ըրած են յիշեալ Էօմէրէ-Խաքան և իր տղայքը։

Ահա այս է մեր վիճակը. մտահոգութիւններ և վշտեր կիս ընկճեցին, գլխիս մազերը այս տարիքիս մէջ ճերմակ եղած են։ Շարեր և յուսահատեր եմ։ Չգիտեմ գլուխս ո՞ր քարին զարնեմ, ո՞ւր փախչիմ։ Ի սէր Աստուծոյ ինձ խրատ մը...

Ձերդ

***

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 20 յունիս 1902

Երբեմն ապրում էր Թիֆլիսում ինտենդանտների վարչութեան մի պետ. իշխարկէ Նորին Գերազանցութիւն, աստեղազարդ, ուժեղ, յարգուած։ Անունը չտանք, մոռած է նա... Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ էր, այն ժամանակ, երբ օֆիցերական խնջոյքներում շամպայնը հոսում էր նոյնքան առատ, որքան նահատակ ռուս զինուորների արիւնը Ղարսի ժայռերի վրայ, այն երանելի ժամանակը, երբ դրամատէր, չինովնիկ, զինուորական լողում էին պետական գանձարանից հոսող „թղթադրամի հեղեղի“ մէջ, ինչպէս ձուկը ջրում։ Կապալների ոսկի դարն էր։ Մեծ ինտէնդանտի առանձնասենեակը ներս ու դուրս էին անում հարուստ կապալառուները առաւօտից երեկոյ։

— Հարիւր հազարով պակաս կը վերցնեմ Ձերդ Գերազանցութիւն, ուրեմն մի խոշոր օգուտ գանձարանին և յետոյ... իբրև արտայայտութիւն իմ յարգանքի դէպի ձեզ, մի փոքրիկ նուէր...

— Դուք գիտէք, որ ես ձեզ երբէք չեմ մերժել, կանեմ ինչ հնարաւոր է. ինչ վերաբերում է ձեր նուէրին, ես այդ վերցնել չեմ կարող. դա դէմ է իմ սկզբունքներին. երդւում եմ, երբէք իմ այս ձեռքը—ցոյց տալով իր փափկիկ թաթը — կաշառք չի վերցրել...

Կապալառուն գիտէր, թէ ինչ է նշանակում „երբէք իմ ձեռքը կաշառք չի վերցրել“. հանեց ծոցից նախօրոք պատրաստած 50 հազարը և դրեց սեղանի վրայ, Նորին Գերազանցութեան առաջ։

— Երբէ՛ք, երբէք իմ ձեռքը կաշառք չի վերցրել, ասաց գեներալը յետ ընկնելով բազկաթոռի մէջքի վրայ և բանալով սեղանի արկղը։ Եւ այն միջոցին, երբ նա կրկնում էր անընդհատ „երբէք, երբէք“, դրամատէրը, վաղուց ծանօթ Նորին Գերազանցութեան „սիստէմին“, հրեց փոքր առ փոքր դրամի կապոցը, մինչև որ նա, առանց դիպչելու գեներալական ձեռքին, ընկաւ արկղը... Արկղը փակւեց, երկուսն էլ ժպտախառն ոտի կանգնեցին. կապալի գործը հարթուած էր։ Եւ յետոյ էլ, ինչպէս և առաջ, այդպէս էին հարթւում և միւս կապալները, զուգընթաց ծանօթ երդման հետ, որ „երբէք ձեռքը կաշառքին չի դիպչում“։

Ո՞վ չի ճանաչում Ռուսաստանում Նորին Գերազանցութեան այդ տիպը. նա նստած է մինիստրութիւնների մէջ, նահանգապետի առանձնասենեակում, զինուորական շտաբում, սահմանի վրայ և մայրաքաղաքում և կլանում է ահագին գումարներ, առանց իր „ձեռքը կաշառքին դիպցնելու“։

Ամենահին գիմնազիայի դիրեկտորի գրասենեակն ենք. նա էլ աստեղազարդ է, յարգուած, ազդեցիկ, շատ լաւ ծանօթ թիֆլիսեցիներին. վաղուց մտածում էր պաշտօնը թողնել, հէնց որ լրանար ծառայութեան թոշակաժամը։ Եւ ինչու չթողնել, ապահով կապիտալիստ է։ Բայց գիտէ՞ք ինչ ճանապարհով։

— Ասա հայրիկիդ, որ վաղը ինձ մօտ անցնի, դիմեց նա հարուստ աշակերտներից մէկին, նախասենեակով անցնելիս։ Հայրիկը եկաւ։

— Գիտէք, Գրիգորի Մինաիչ, փոքրիկի համար պէտք է մէկ առանձին ուսուցիչ վերցնէք, ռուսերէնի և լատիներէնի։

— Ուրախութեամբ, կը խնդրեի միայն մատնանիշ անել մէկին, աւելացրեց „միամիտ ձևացող“ հայրիկը, որ վաղուց գիտէր, թէ դասատուները, դիրեկտորի հովանաւորուածներից, արդէն պատրաստ են։

— Միամիտ եղէք վեց ամսում ձեր որդին քննութեան համար բոլորովին պատրաստ կը լինի։

— Դժւարանում եմ հաւատալ, շատ է ծոյլը

— Դժւարանո՞ւմ էք, բացականչեց դիրեկտորը, գրա՞զ կարող եմ գալ։

— Մէկին երկու, միայն թէ կասկածում եմ։

... Գրազը վերջացաւ, մի նուէր հազար ռուբլեանոց և մի խնջոյք արտաքին վայելչութեան համար։

Այդպէս էին փոխւում աշակերտները իրենց դասատուները, այդպէս էր հարստանում դիրեկտորը, միշտ երդումը բերանին,որ „երբէք ձեռքը կաշառքին չի դիպչել“։

Դատարանի շքեղ շինութեան մէջ, հաստատ առանձնասենեակում բազմած է նախագահը։ Մտախոհ է նա. ի՞նչ է նրան զբաղեցնում. դժբախտ բանտարկեալի վիճակը, որին կէս ժամ առաջ նա աքսորի դատապարտեց, թէ մի այլ խնդիր, որ դուրս էր դատարանի պատերից... Դուռը բաղխեցին. ներս մտնողը մի կին է։ Ծառայողները նրան լաւ են ճանաչում և կարո՞ղ են չճանաչել իրենց նախագահի կնոջը։

— Ի՞նչ կայ, կիսավախով հարցրեց ամուսինը։

— Եղբայրը եկաւ և 10 հազարը բերեց, շշնչաց կինը, դիւական ծիծաղը երեսին։

— Անհնարին է, անկարելի է. մեղադրական փաստերը սարսափելի են. պրոկուրորը ոչինչ չի զիջում, մտածում եմ, մտածում և ոչինչ չեմ կարող անել։

— Ինչ ուզում ես արա, ես արդէն խոստացել եմ եմ, մտածում և ոչինչ չեմ կարող անել։

— Ինչ ուզում ես արա, ես արդէն խոստացել եմ և փողը վերցրել...

... Եւ կինը շարունակում էր փողեր վերցնել, երբեմն ուղղակի, երբեմն պարտամուրհակի ձևով, յաճախ էլ իր ջահել աղջկայ աջակցութեամբ, յօգուտ այն անսանձ ծախսերի, որի մէջ խրուած էր այդ „բարձր“ ընտանիքը։ Ամէնքը գիտէին այդ, սակայն յանցաւորը երկար անպատիժ մնաց և իբրև դատաւոր շարունակում էր յանուն օրէնքի բանտ ուղարկել՝ կաշառակերութեան մէջ մեղադրւող խղճուկ գրագիրներին և ոստիկանական ծառայողներին։ Զարագործը դատում էր, բազմած նախագահական աթոռին, ձեռքը յենած օրինագրքի վրայ, միշտ երդւող, որ „իր ձեռքը կաշառքի չի դիպել“...

Իբրև լուսաբանող մի նոր պատկեր, ես անփոփոխ առաջ եմ բերում մի ճշտապատում նամակ, ստացած Բագուից, ներկայումս կարևոր կովկասեան կենտրոնից։ Ահա.

«Բագուի գիմնազիայի վերատեսուչ Պ...ցկով շարունակ հարբած, գիշերները թղթախաղի նստած, ցերեկները հազիւ ժամանակ է ունենում քնելու եւ իր հրէշաւոր ծախսերի համար աղբիւրներ գտնելու մասին մտածելու։ Թէ որքան ճիշդ են այս խօսքերը — այդ կարելի է եզրակացնել նրանից, որ տարին մի քանի անգամ հաղիւ գնալով իրեն յանձնուած դասերին, նա այնքան քիչ է ճանաչում աշակերտներին, որ եռամսեակի թուանշաններ գնելիս, անկարող է լինում այդ անել ինքը եւ իր առարկայից թուանշան գնելը յանձնում է միշտ դասարանական վերակացուներին։

«Դժբախտ է այդ գիմնազիան իր 1,000-ից աւել աշակերտներով, դժբախտ ոչ միայն դրանով, որ պատանիները չեն կարող այդտեղ սովորել մի բան, այլեւ մանաւանդ նրանով, որ կարիք էլ չկայ սովորելու։ Այդտեղ կարելի

է դրամով վկայական ստանալ, այդտեղ դրամով են ընդունում նոր աշակերտներ, այդտեղ անբարոյականացած է ամբողջ ուսուցչական մարմինը։

«Բաղուեցի միլիոնատէր Բ.-ի որդին բէալական դրպրոցից յետոյ մինիստրական վկանսիայով (այսինքն առանց քննութեան, մինիստրութիւնից նշանակելով) մտել էր Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը, բայց՝ անկարող լինելով կուրսից կուրս անցնելու համար քննութիւն տալու, հեռացրել էր ինստիտուտից։ Դրանից յետոյ նա մտածում էր համալսարան մտնել, ինկատի առնելով, որ գիմնազիայի վկայական Բաղուում կարող է ստանալ առանց քննութիւնների, իսկ համալսարանում՝ իւրաքանչիւր դասընթացում՝ կարելի է նստել ոչ պակաս քան երկու տարի։ Շնորհիւ Պ.-ցեվի՝ այդ ծրագիրը այսօր աջողած է կատարելապէս։ Վերատեսուչը ստանալով տղայի հարուստ հօրից մի կլոր գումար, տալիս է նրան գիմնազիայի ատեստատ, ուր սակայն պահպանած են բոլոր կարեւոր ձեւականութիւնները։

«Եթէ ուզում էք ձեր որդուն, աղգականին կամ ծանօթին Բաղւի արական գիմնազիան մտցնել, մի մտածէք նրան լաւ պատրաստելու մասին։ Դնացէք անձամբ վերատեսուչ Պ.-ցեվի մօտ եւ սովարական խնդիրը տալուց յետոյ՝ «նուիրեցէք» մի նկատելի գումար յօգուտ «աշակերտական ամարային կոլոնիայի», որի զեկավարը ինքը Պ.-ցեվն է։ Լաւ կանէք, որ նուէրը նոյնիսկ չնշանակէք կոլոնիայի համար ժողովող նուիրատուութիւնների մէջ։ Կը նշանակէք թէ ոչ, յամենայն դէպս գլխաւորը նուէրն է եւ նուէրը տալով կարող էք համոզած լինել, որ ձեր խնդիրքի հետեւանքը կը լինի «չատ յաջող քննութիւն»։

«Տարւայ ընթացքում Պ.-ցեվն իր մուտքը աւելցնելու համար գործադրում է եւ հետեւեալ խորամանկ միջոցը։ Նրա բազմամարդ գիմնազիայում չատ կան հարուստ ընտանիքի զաւակներ։ Երբ իրեն փող է լինում հարկաւոր, նա գրում է մուրհակներ եւ ուղարկում է այս կամ այն աշակերտի ծնողին՝ խնդրելով իրեն պարտք տալ մի որոշ գումար։ Ծնողները իմանալով, որ եթէ դրամ չտան, իրենց որդիքը պիտի մնան միեւնոյն դասարաններում, վճարում են մուրհակների գինը եւ պահում են այդ մուրհակները մինչեւ իրենց որդիք փոխում են դասարանները։ Դրանից յետոյ շատերը ոչնչացնում են Պ.-ցեվի մուրհակները մինչեւ հետեւեալ տարին, մինչեւ նոր մուրհակներ։

«Ուսուցչական մարմնից մինչեւ այժմ չէ լուել բողոքի ձայն վերատեսուչ Պ.-ի եւ իր անթիւ զեղծումների դէմ։ Կարելի է ուրեմն երիւակայել, թէ ինչ արարածներ են դրանք եւ իրենք իրենց կողմից ինչեր են անում։ Նրանք լսել եւ լսում են նոյնիսկ այն ժամանակ, երբ Պ.-ցեվ մի քանի ամիսներով իւրացնում է նրանց ռոճիկները։ Ինչի՞ց են ստիպած լսել... Մտածեցէք»։

Ահա և ցենզօրի (գրաքննիչ) գրասենեակը։ Ցենզօր. լրագիրների կտրանքները առաջը թափած, աչքերը յառած կարմիր թանաքին, նա խազում և կտրտում է, յանուն երկրի շահերի, յանուն ընդհանուր ապահովութեան։ Ո՞ւմից պիտի կաշառք վերցնի նա. նրա գործը դրամատէրերի հետ չէ, այլ անապահով խմբագիրների և գրողների, անվարժ կաշառատուութեան։ Սակայն գաղտնիքների, նենգամտութեան, ելևէջների վարժ ցենզօրը դրա միջոցը գտել է։ Եւ նախ քան լրագրի համարի հրատարակութեան թոյլտուութիւնը, մի փոքրիկ տոմսակի վրայ նա հետեւեալ բառերն է շարադրում ուղղած հրատարակչին կամ խմբագրին.

Մեծայարգոյ ***

Ուղարկեցէք ինձ, խնդրում եմ, փոխարինաբար, 300 ռուբլի, որը շնորհակալութեամբ կը վերադարձնեմ չատ շուտով։

Թերթը պատրաստ կը լինի մի ժամից, ձեր գրաբերը կարող է վերցնել։

Միշտ պատրաստ ծառայելու ***

„Փոխարինաբար և շատ շուտով" խօսքերը վաղուց լաւ ծանօթ են խմբագրին, որ տարիների փորձառութեամբ եկել է այն եզրակացութեան, որ „երեխայութիւն" է թշնամացնել գրաքննիչին և աւելի մեծ միամտութիւն է յոյս դնել բողոքի կամ բարձր ատեանի վրայ և նա ուղարկում է կաշառքը, թէև ուրիշ անուան տակ, և իբրև մխիթարանք կցում նրան մի քանի յօդուածներ, որոնք այլ դէպքում չէին թոյլատրւի... Իսկ պարտաճանչ ցենզօրը շարունակում է ջնջել, տոմսեր գրել, շքանշաններ ստանալ և վայելել այս անարգ կառավարութեան մէջ բարեխիղճ, անհրաժեշտ պաշտօնեայի անունը, „որի ձեռքը երբէք կաշառքի չի դիպչում"։

Եթէ գեռ զզւանքը չէ պատել ձեզ, ընթերցող, անցնենք ուրիշ „առանձնասենեակներ"։

Կովկասեան մայրաքաղաքի որոշ շրջաններում ո՞վ չէ լսել այն բարձրագիր տիկնոջ մասին, որը փոխառութիւններ էր անում, սալօնի կնոջ բոլոր վայելչականութեամբ, սակայն երբէք չվճարելու պայմանաւ, այլ միայն այն պայմանաւ, որ խնդրատուի գործին այս կամ այն ընթացքը տրւի. կամ կաշառքի այն փաստերի մասին, որոնք հարիւրներով շրջապատում են զինւորագրական ատեանները, ուր նորակոչ զինւորի „կուրծքը նեղացնելու", „հեռատեսը կարճատես դարձնելու", կամ „առաջին կարգի արտօնութեան իրաւունքի" վարձատրութեան չափը սահմանած է այնքան խիստ ճշտապահութեամբ և միաժամանակ ծածկւած այնքան ապահով ճարպկութեամբ։ Կամ այն հրէշաւոր մեքենայութիւնների մասին, որոնք կռում-կոփւում են դրամի ուժով, հոգևորական կանսիստորիական հիմնարկութիւններում, ուր աստւածաւուժ փողը դարձնում է չհասը հաս, բարոյականը անբարոյական, անժառանգը ժառանգաւոր։ Եւ այդ բոլորը „անձնանւէր" զինւորականների և „աստւածընտիր" սրբազանների հովանու տակ, որոնց ձեռքը, իհարկէ, „երբէք կաշառքի չի դիպչում"...

Սակայն այս բոլորը դեռ կաշառակերութեան մի սիստէմն է, ընդունւած մեծամեծների շրջաններում, վարագուրւած քաղաքավարութեան շղարշով։ Բայց կայ և ուրիշ սիստէմ, տարածւած վարչական ստորին շրջաններում, անողոք և սոսկալի։

Ահա գնում է գիւղացին դէպի քաղաք։ Եաստուքի միջոցով հրաման է ստացել. դաշտ ու գործ թողած, դանէ դուռ ընկած, 50 տոկոսով հազիւ 25 մանէթ է գտել և այդ 25 մանէթով գնում է արդարանալու, „թէ ինչու է նա անտառից փայտ կտրել"։ Դրկիցները եկան ճամբայ դնելու և մի հարց միայն տւին. „ինչքա՞ն ես տանում"։ Այդ „ինչքան"-ի մէջն է ամփոփւած օրէնքը, դատը, յոյսը... Հինգ օր է արդէն գիւղացին գաւառական ատեանի շեմքում ընկած սպասում է... Նրանից 50 մանէթ են պահանջում. „պակաս չի լինի" յայտարարեցին։ Դիմում է գրագրին, գիւանապետին. „աղա-պրիստաւին" — գաւառապետի բարձրութեան երբէք չի հասնի — և ամէն տեղ նոյն պատասխանը. „պակաս չի լինի"։ Եւ ի՞նչպէս պակաս լինի. 25 մանէթը միայն գաւառապետին պիտի հասնի, իսկ մնացածները։

Փաստերը անթիւ են։ Ոստիկանական կաշառակերութեան նկարագիրը տալու համար գուցէ նոյնքան պէտք է գրել որքան ինքը ոստիկանութիւնն է գրում անմեղ „հպատակների" դէմ։ Բաւականանանք մի նամակով, որը ուղարկել է ինձ վստահելի մի անձնաւորութիւն Բագուի

նահանգից։ Ահա թէ ինչ է ասում ականատես նամակագիրը.

„Նոր տարուն եւ Զատկին իւրաքանչիւր գրասենեակ Բալախանում եւ Սեւ քաղաքում (նաւթահորերի եւ գործարանների կենդրոնավայրերում) ուղարկում է ոստիկանապետին մի յայտնի գումար (25-50-100 րուբլի) հետեւեալ կերպով շարադրուած նամակի հետ (ռուսերէն).

«Ուղարկելով ընդ սմին «...» րուբլի խոնարհաբար խնդրում եմ ձեզ բաժանել այդ փողը ձեր բարեծնութեան ենթակայ ստորին պաշտօնեաների մէջ»։

(Ստորագրութիւն կառավարչի)

„Սա ընդունուած ձեւ է, որով գրում են համարեա բոլոր գրասենեակները, եւ այդ նամակների պատճէնները պահում են գրասենեակների պաշտօնական գրքերում. ուղարկւող դրամը բացարձակ կաշառք է ոստիկանութեան եւ միանգամայն անհրաժեշտ է համարւում բազմաթիւ սանիտարական, տեխնիքական եւայլն պահանջների վերաբերմամբ ոստիկանական ոեւէ անախորժ միջամտութեան առաջն առնելու համար։ Սակայն այդ կարգի առաքումներով չէ վերջանում գործարանների կամ նաւթահանքերի վճարը։ Թէեւ դրամը, ինչպէս ասում է նամակներում, ուղարկւում է ոստիկանապետին՝ իր ստորադրեալներին բաժանելու համար, բայց դա գրաւոր դոկումէնտներում անմեղութիւն պահպանելու մի ձեւ է—ուրիշ ոչինչ. իրօք՝ դրամը ամբողջապէս իւրացնում են ոստիկանապետը կամ պրիստավը, իսկ իրենց ստորադրեալներին նրանք ուղարկում են գործարանները՝ անձամբ շնորհաւորութիւններ անելու եւ իրենց մասերը ստանալու համար։ Եւ դիտուած է, որ երբ ոեւէ գրասենեակ հրաժարւում է այդ աւօրինի տուրքերը ճշդութեամբ վճարելուց, իսկոյն ոստիկանութեան այս կամ այն գործակալը գալիս է գործարան մի անկարգութիւն նկատելու եւ պատշաճ արձանագրութիւն կազմելու համար։ Մի երիտասարդ կառավարիչ Սեւ քաղաքում պատմում էր, որ նոր պաշտօնի մտած, իր ծառայութեան հէնց երկրորդ օրը նա արժանանում է մի թաղական վերահսկողի (օկօլօդօչնի նադզիրատել) այցելութեան։ Երբ գործարանի փորձուած ծառայողները հասկացնում են անփորձ կառավարչին պարոնի այցելութեան նպատակը, նա մերժում է կօպէկ անգամ վճարելու։ Նոյնը կրկնւում է նաեւ հետեւեալ օրը, մինչ շուտով երիտասարդ կառավարիչը տեսնում է մի օր գործարանի բակում միեւնոյն հսկողին արձանագրութիւն կազմելիս՝ թէ գործարանի բակը շատ կեղտոտ է եւ թէ դրսի մի պատը քանդուած է առանց քաղաքային վարչութեան թոյլտուութիւնը ունենալու։ Կառավարիչը պիտի ամբողջ շաբաթներ եւ գուցէ ամիսներ դէս ու դէն քարշ գար այդ մեղադրանքները ջնջելու համար եւ ով գիտէ որքան ծախսերի պիտի ենթարկուէր։ Նա ստիպւում է խոնարհուել իր ստորադրեալ փորձուած ծառայողների խնդրի առաջ, եւ ոստիկանութեան պաշտօնեային իր առանձնասենեակը հրաւիրելով՝ վճարում է նրան 10 ռուբլի եւ արձանագրութիւնը ձեռքից առնում պատռում։—Շատ շնորհակալ եմ, պ. կառավարիչ, որ խնդիրը վերջացրիք այսպէս, սովորական ձեւով... Ինչ անենք, ռոճիկ քիչ ենք ստանում, իսկ ծախսերս շատ է։ Կրկին շնորհակալութիւն։ Վստահ եղէք ամէն կերպ ինձ վրայ"—ասում է թաղական վերահսկիչը հեռանալով գործարանից։

„Այս ընդունուած, ընդհանրացած, բոլորին յայտնի ձեւերից դուրս, իւրաքանչիւր պաշտօնեայի սրամտութիւնից է կախուած եկամուտի նորանոր աղբիւրներ գտնել իր համար։ Բալախանիի ոստիկանապետ Խ.-եցկի, օրինակ, որ եղել է կաթօլիկ կսէնձ (լեհացի քահանայ) եւ որը օրթօդօքսութիւն ընդունելով՝ նուիրել է իրեն ոստիկանական կարիէրի, իր մի որդուն, որ չէ ծառայում ոչ մի տեղ, գրել է տուել երեք նաւթահանքերում, իբրեւ գրասենեակի ծառայող՝ 50-ից մինչեւ 70 րուբլի ամսականով իւրաքանչիւր հանքում։ Ամէն ամիս երիտասարդը գալիս է այդ հանքերը, եւ ստորագրելով գրասենեակներում պատշաճ ստացագրեր, ստանում իր համար նշանակուած թոշակը։ Պրիստաւները մինչեւ անգամ յատուկ ոճ են ստեղծել իրենց դժգոհութիւնը արտայայտելու համար, երբ կամ նրանց քիչ է կաշառք ուղարկւում կամ ժամանակին չէ ուղարկւում։ Նրանք հեռախօսով կանչում են կառավարիչներին եւ ասում.—Դուք, պպ. ինժեներներդ, շատ լաւ էք սովորել թւաբանական առաջին երեք գործողութիւնները, բայց բաժանման մէջ շատ թոյլ էք... Հասկանո՞ւմ էք ինչ նկատի ունիմ"...

„Սակայն իր ընդհանուր նշանակութեամբ ամենավրդովեցուցիչ ձեւն է ստանում ոստիկանական կաշառակերութիւնը, երբ դա արտայայտւում է ամէնօրեայ դէպքերում այն համերաշխութեան մէջ, որ վաղուց գոյութիւն ունի աւազակների եւ ոստիկանութեան մէջ։ Օր չէ անցնում համարեա որ Բալախանում եւ Բագւում սպանութիւն չպատահի եւ երբէք չեն գտնում յանցաւորները։ Բաւական է, որ աւազակը բաժին հանէ ոստիկանին եւ նա աներկիւղ կարող է իր տանը նստել, իսկ նրա տեղ կը ձերբակալի սպանողի առաջին պատահած անմեղ հարեւանը։ „Կասպեան ընկերութեան" գանձապետի սպանման գործում, օրինակ, բոլոր ձերբակալուածների մէջ նոյնիսկ զինւորական ատեանը չկարողացաւ մեղադրել եւ ոչ մէկին։ Բալախանում յայտնի էին իրենց ոճիրներով երկու աւազակապետներ—Քամփա եւ Շիշի, որոնք երկար տարիներ ահ ու դողի մէջ էին պահում բոլոր հանքերը։ Սրանցից Քամփան անձամբ պատմում է իր ծանօթներին, որ երբէք չէ տուժել ոստիկանութիւնից, երբ կատարում էր անվերջ սպանութիւններ եւ գողութիւններ, բայց հէնց որ մի քանի տարի առաջ թողեց իր արհեստը, ոստիկանապետը նրան բռնել տուեց, իբր արդէն անօգուտ մարդու"...

Եւ այդպէս ամէն տեղ ու ամէն միջոցներով այս հազարգլխեան բիւրօկրատիան ծծում, արիւնաքամ է անում ժողովուրդը, ու նրա ձեռքում տանջւում, կեղեքւում է գիւղացին, ամբողջ գիւղը, ամբողջ գաւառը. Թոյլը՝ եասաուլի ձեռքով, աւելի ուժեղը՝ պրիստաւի կամ գաւառապետի դիւանում, մէկը՝ զինւորական ատեանում, միւսը մաքսային վարչութեան մէջ, իսկ աւելի զօրեղները՝ նահանգական քաղաքներում, և դրանից աւելի բարձր վարչութիւններում... Ընդհանուր համատարած կեղեքումն է սա, օրինաւորուած աւազակութիւն, որ կատարւում է չէ թէ հեռաւոր ճանապարհների վրայ մութ գիշերներին, այլ հանրային դիւանատներում, զարդարուած գեղեցիկ ցուցանակներով, դէպ ուր քարշ է գալիս դժբախտ ժողովուրդը արդարութիւն գտնելու...

Եւ շնորհիւ այդ ապականուած դասակարգի, ստեղծուած և զօրացած վարչական անպէտք սիստէմների ու սօցիալական անարդար կարգերի, Կովկասում օրաւուր նկատւում է նոր երևոյթ։ Կովկասեցին, որ սկզբում այնքան համակիր էր ռուսական տիրապետութեան տարածման—անշուշտ ներքին խռովութիւններին վերջ դնելու շնորհիւ—ներկայումս արտայայտում է խոր հիասթափութիւն և վտանգաւոր պտուղներ խոստացող հակակրանք։ Ժողովրդի մէջ չմնաց հաւատ դէպի պետական արդի կարգերը, դէպի այդ կարգերի ներկայացուցիչը։ Սիստէմի պակասութիւնները լրացաւ գործադրողների պակասութեամբ։ Դա ռուսական տիրապետութեան կատարեալ սնանկութիւնն է Կովկասում։

Այդ հիասթափման նպաստեց և այն հանգամանքը, որ անբարեխիղճ, անընդունակ, անբարոյական, կաշառքի համար ամէն բան ոտի տակ տւող չինօվնիկութիւնը պատժելիս, ռուս կառավարութիւնը մտցրեց դարձեալ ազգային տեսակէտը։ Անբարոյական, կաշառակեր հայ չինօվնիկին պատժողը ներում է անբարոյական, կաշառակեր ռուս չինօվնիկին։ Այն՝ ինչ ներւում է մոսկւացուն, չի ներւում երևանցուն. վրացին կամ լեհացին կարող չէ անել այն, ինչ անում է իր ռուս պաշտօնակիցը։ Սա իհարկէ անբացառիկ երևոյթ չէ, բայց դարձել է մի տեսակէտ, որ քանի գնում աճում և թեւաւորւում է։

Մի առօրեայ փաստ։

Թիֆլիսում ապրում է մի պաշտօնեայ, ռուս, ուղղափառ և անկասկած միապետական. Կ-իչ է նրա անունը, անդամ դատաստանական պալատի։ Դատարանը շատ քիչ է տեսել այդպիսի անբարոյական մի ոչնչութիւն. կաշառակեր, այն էլ ամենավուլգէր տեսակի, արբեցող, անդամ ամէնազազիր խմբերի, անբարոյական, մշտական

հերոս հասարակաց տների... Ո՞վ չի ճանաչում նրան, և ո՞վ չգիտէ, որ շատ անգամ գիշերային օրգիաներից ուղղակի գատարան է գալիս այդ ընտանիքի հայրը, անդամակցելու կամ նախագահելու, վճիռ արձակելու յանուն արդարութեան և օրէնքի, որի հետքերն անգամ չէին մնացել նրա գինովցած գլխում և լղփացած մարմնի մէջ։

Բայց նա չի վռնդւում։

Թիֆլիսում կար և մի այլ պաշտօնեայ, նոյնպէս դատարանական, դատախազի օգնական, ծագումով հայ, Օ-ի ազգանունով։ Վարում էր նա իր պաշտօնը, ինչպէս շատերը՝ ամսի 20-ին ռոճիկ ստանալու համար, և իբրև ոչ անարժան բարձրանում էր իր աստիճանների մէջ։ Եւ յանկարծ մի օր կանչւած աւագ-դատախազի առանձնասենեակը, առաջարկութիւն ստացաւ անմիջապէս հրաժարւել պաշտօնից։ — „Ինչո՞ւ“ մրմնջաց յանկարծակիի եկած մեղադրւողը։ Մեղադրողը բացեց բերանը. „դուք անարատ չէք ձեր ընտանեկան կեանքի մէջ և անհաւատարիմ ձեր կնոջ, կենակցում էք տիկին ***-ի հետ... Հասարակութիւնը գիտէ այդ։ Դուք արատաւորում էք արդարադատութեան տաճարը“...

Եւ նա վռնդւեց։

Վերաբերմունքի այդ „երկու չափ, երկու կշիռն“ է, որ ցնցեց և ցնցում է արդարութեան գաղափարի հիմքը կովկասեան ժողովրդի մէջ, հասցնելով երբեմն նրա կասկածոտութիւնը և հիասթափմունքը առասպելների։ „Փող տո՛ւր, ես օրինագիրքը կը փոխեմ“ ահա ժողովրդական փիլիսոփայութեան բանաձևը՝ դրած ամէն մէկի դլխին իբրև խոր համոզմունք։ Եւ երբ ազատ մերկացումներից զուրկ այս երկրում լուր է պտտում շշուկի ձևով թէ այս ինչ մինիստրը, մեծ իշխանը, կամ պալատական կարևոր պաշտօնեան կաշառւել, ծախւել է, ժողովրդական փիլիսոփայութիւնը սառնասիրտ կերպով տրամաբանում է։ „Ի՞նչ կայ զարմանալու“։

Պատմում են հետաքրքիր մի զրոյց, բնորոշ՝ ժողովրդական փիլիսոփայութեան տեսակէտից, կատարւած մի հայի և ռուսի մէջ. հայը՝ դեռ կիսահիասթափ, իսկ ռուսը բոլորովին հիասթափւած։

— Տեսնես թագաւորն էլ կաշառք կուտի՞, հարցրեց հայը իր մտերիմ ռուսին։

— Որ տան, լա՜, պատասխանեց ռուսը սրտի խորքից...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԹԱՒԱՔԱԼԵԱՆ—ԶԱՔԻ

1896 թւի աշունն էր։

Կովկասի բոլոր եկեղեցիներում ստացւած էին հայոց կաթողիկոսից կոնդակներ՝ հսկումն կատարելու այն հարիւր հազարների յիշատակին, որոնք ընկած էին Տաճկահայաստանում իրենց հայ լինելու համար։ Նոյնիսկ ապահով Ալէքսանդրօպոլում սիրտը թախիծով լի հայ ժողովուրդը չգիտեր որ կողմը նայէր, ինչի վրայ յոյս դնէր։ Զանգի տխուր հնչիւնները հաւաքել էին եկեղեցում խուռն բազմութիւն։ Սեղանի վրայ կանգնած քարոզիչը զգացւած ու խրոխտ ձայնով խօսում էր Յիսուսի խաչելութեան մասին։ Նա համեմատում էր այդ՝ մեր դժբախտ ժողովրդի խաչելութեան հետ և սիրտ էր տալիս ու հաւատացնում, որ չկայ յարութիւն ու վերածնութիւն առանց խաչելութեան և չարչարանքի։

Ժողովուրդը լսում էր քարոզչին, հաշտւում այդ մտքի հետ, և, կարծես, սիրտ առնում։ Աւելի դիւրազգացները արտասուք էին թափում և շատերը հեկեկալով դուրս էին գալիս տաճարից...

Քարոզիչը Ալէքսանդրօպոլի յաջորդ Բագրատ վարդապետ Թաւաքալեանն էր, մեր վաղեմի ընկեր Զաքին։

Տարիների ընթացքում թափառելով և համբուրելով Մայր երկրի հողերն ու քարերը, հազար ու մի զրկանքներ կրելով, նա աշխատում էր հայ ժողովրդին ներշնչել Յարութեան գաղափարը։

Զաքին պատկանում էր հայ հայրենասէրների պիսներների շարքին, նրանց, որոնց վիճակւած էր նոր և դժւար ճանապարհ բանալ մեր ազգի վերածնութեան համար։ Պտտելով Տաճկահայաստանի ամենախուլ վայրերը, Զաքին կարողացաւ ձեռք բերել այնպիսի մօտ ծանօթութիւն երկրի պայմաններին, որ ունէին շատ քչերը հայերից։ Տրւելով մեր ազգային դատի պաշտպանութեան գործին, նա կանգ չառաւ ոչ մի վտանգի ու ծանրութեան առջև։ Մի օր նա քարոզիչ էր, միւս օրը զինւոր։ Սովոր ապահով կեանքի, հարկ եղած ժամանակ նա խոյս չէր տալիս լինել ծառայ և հասարակ հացթուխ։ Բոլորը կը խոստովանւին, որ մինչև Կովկասում հոգևորական պաշտօններ վարելը՝ մեր դատի ասպարիզում Զաքին ցոյց տւեց օրինակելի անձնւիրութիւն և մեծ կամքի ուժ։ Ցենդային աշխատանքը չանցաւ առանց հետևանքի. նա քաքաքայեց Թաւաքալեանի առողջութիւնը և վաղաժամ իջեցրեց նրան գերեզման։

Հաւատո՞ւմ էր արդեօք Թաւաքալեանը հայոց եկեղեցու դաւանանքներին կուսակրօնութիւն ընդունելու ժամանակ — մենք այդ չգիտենք։ Սա միայն անհերքելի է, որ ինչպէս իր անձնական բարեկամների կամ հակառակորդների մասին խօսելիս, այնպէս էլ եկեղեցում, Թաւաքալեանը մոռանում էր ամէն ինչ և տրւում էր անկեղծութեան։ Նրա ծանօթները հաւատացնում են, որ Թաւաքալեանի մշտական անկեղծութիւնը առաջ էր գալիս նրանից, որ եկեղեցու և նոյնիսկ սրբերի վրայ նա նայում էր այլաբանօրէն՝ միշտ այդ անունների տակ ինկատի ունենալով այս կամ այն իր պաշտած, բայց կորած անձնաւորութիւնը։

Թաւաքալեանը մնաց ազնիւ և անկեղծ մինչև իր կեանքի վերջը։

Ափսոս միայն, որ Զաքին չգնաց իր սկզբից ընտրած ուղիղ ճանապարհով, այլ ընկաւ հոգևորականութեան նեխւած մթնոլորտը։

Ափսոս, որ նա չթաղւեց իր վաղեմի ընկերների կողքին, նրա սրտին այնքան մօտ վայրերում...

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԻՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղաքական խոշոր համաստեղութիւնները մնում են անփոփոխ։ Թէ երեքպետեան և թէ երկպետեան դաշնակցութիւնները կանգուն են առ այժմ և կը յարատևեն, քանի դեռ չեն ընջւի այն պատճառները, որոնք ծնունդ տւին նրանց։

Համաշխարհային մրցման կրկէսում կղզիացումը նպաստաւոր չէ։ Ամէն մի պետութիւն զինակից է փնտրում. անգամ Մեծ Բրիտանիան ստիպւած է թողնել իր „վեհապանծ մեկուսացումը“ և գրկախառնւել փոքրիկ Եապոնիայի հետ, որը կարող է աջակցել նրան՝ ծայրագոյն արևելքում պայթելիք փոթորիկների միջոցին։

Դեռ ևս մեծ է պատերազմի վտանգը։ Եւ որքան աւելի է ամբարում եւրոպական կապիտալիզմը, որքան աւելի են բորբոքւում համաշխարհային շուկայի գրաւման ախորժակները, այնքան աւելի է մեծանում այդ վտանգը։

Բայց նոյնքան ծանրանում է և պատերազմի „պատասխանատուութիւնը“... Մի կողմից՝ մեծ ընդհարումների ազդած սարսափը, միւս կողմից՝ ներքին „սոցիալական պատուհասը“, որ ամէն մի երկրում կայ և որ պատրաստ է օգտւել առիթից ու տակն ու վրայ անել զառամեալ Եւրոպայի խարխուլ շէնքը — ահա ծանրակշիռ հանգամանքներ, որոնք այնքան մտահոգութիւն են պատճառում ազգերի ճակատագիրը վարող մինիստրներին և ամենավայրագ ու ռազմատենչ վեհապետներին անգամ ստիպում են ներբողներ կարդալ „խաղաղութեան“ և „մարդկայնութեան“ սկզբունքներին։ Այդ ներբողները չեն արգելում, սակայն, նոյն վեհապետներին՝ միշտ աւելի և աւելի զարկ տալ միլիտարիզմին, աճեցնել զօրքերն ու նաւատորմները։

Եւ այդպէս յարատևում է սպառազէն խաղաղութիւնը։ Եւ անզօր են մնում միջազգային կօնգրէսները, համաշխարհային զինաթափութեան հրաւէրները... Միլիտարիզմի թունաւոր շունչը վարակում է բոլոր պետութիւններին։ Իրազեկ մարդիկ մարգարէանում են, որ Անգլիան ևս Հարաւ-Աֆրիկայի պատերազմից յետոյ պիտի յղանայ ցամաքային զօրութեան հսկայ ծրագիրներ, պիտի մոցնէ զինւորական պարտադիր ծառայութիւն, որը խախտելով ռամկավարական դարաւոր տրադիցիաները՝ նոր պատուհասներ պիտի ստեղծէ միջազգային խաղաղութեան համար։

Տրանսվալիան պատերազմը վերջացաւ և Հօն Բուլը այսուհետև ազատ շունչ քաշելով՝ պիտի վերսկսէ իր համարձակ գործողութիւնները հեռաւոր ու մերձաւոր Ասիայում։ Եապոնիայի հետ կնքած դաշինքը նոր ուժ կը հաղորդէ նրան։ Ցամաքային պետութիւնները և Ռուսաստանը մասնաւորապէս լաւ գիտակցում են այդ. ուստի իրենք ևս խնամքով ամրացնում են իրենց դիրքերը, պատրաստւելով պաշտպանողական և միանգամայն յարձակողական ընթացքի համար։

Ասիական վտանգը չէ միայն, անշուշտ, որ զբաղեցնում է ցամաքային դիւանագէտներին։ Բազմաթիւ են միջազգային կնճռոտ խնդիրները և դեռ կենդանի է աւանդական անտագօնիզմը ցամաքի առանձին պետութիւնների միջև։ Այդ է պատճառը, որ վերջին 8-9 ամիսների ընթացքում հանդիսատես եղանք այնքան մեծագոչ ծանուցումների՝ թէ երկպետեան և թէ երեքպետեան դաշնակցութեան կողմից։ Երկու քաղաքական համախմբումները շեշտեցին իրենց ներքին անխզելի կապը և իրենց առաքելութիւնը։

Թէ անցեալ աշնան, երբ Նիկոլա II այցելեց Ֆրանսիան և թէ ներկայ տարւայ մայիսին, երբ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուբէն փոխայցելութեան գնաց Պետերբուրգ, — մենք լսեցինք միևնոյն ազդարարութիւնը՝ „երկու բարեկամ և զինակից ազգերի մասին“։

Ռուս-ֆրանսիական դաշնակցութիւնը դեռ ևս ամուր է և երկու երկրներում էլ զգացւում է նրա անհրաժեշտութիւնը։ Մենք այդ դիտեցինք անգլօ-եապօնական դաշինքը կապւելու միջոցին, ներկայ տարւայ փետրուարին։

Անգլիան և Եապոնիան՝ տեսնելով Ռուսաստանի սարքաւ առաջադիմութիւնը Չինաստանի մէջ՝ համաձայնութեան եկան ընդհանուր ուժերով ապահովելու statu quo-ն ծայրագոյն արևելքում, անխախտ պահելու Չինաստանի և Կորէի անկախութիւնը։ Երկու դաշնակիցները բաց են յայտարարում Չինաստանի դռները բոլոր պետութիւնների համար և իրաւունք են համարում ձեռք առնել միջոցներ, որոնք անհրաժեշտ կը լինեն ապահովելու statu quo-ն ընդդէմ ոևէ ուրիշ պետութեան։

Այդ իրողութիւնը, ինչպէս և սպասելի էր, մեծ յուզում առաջ բերեց քաղաքական շրջաններում. ուրիշները ևս վաղուց փնտրում էին Եապոնիայի զինակցութիւնը։

Ռուսաստանը, որի դէմ յատկապէս ուղղւած էր դաշինքը, և Ֆրանսիան, որ նոյնպէս ունի իր չինական քաղաքականութիւնը, փութացին պատասխանել անգլօ-եապօնական դաշնագրութեանը։ Նրանք իրենց կողմից հրատարակեցին, որ իրենք ևս դաւանում են այդ դաշնագրութեան հիմնական սկզբունքները, բայց որ նոյն երկիւղից դրդւած՝ իրենք ևս ձեռք կառնեն նախազգուշութիւններ։

„Բաց դռների“ քաղաքականութեան ջերմ պաշտպան է կանգնում, ինչպէս յայտնի է, նաև Ամերիկան, որը վերջին տարիներս հանդէս է գալիս, որպէս ծանրակշիռ գործօն հեռաւոր արևելքում։

Այդպիսով թէ Չինաստանի ամբողջութիւնն է ակամայ ապահովւում, թէ խաղաղութեան գործն է վաստակում, և թէ քարացած վիթխարի պետութեան դռներն են բացւում եւրոպական կապիտալիզմի և առհասարակ քաղաքակրթութեան հոսանքի առաջ։ Այդ հանգամանքը շատ նշանակիչ է։

Ռուսաստանը և Ֆրանսիան մարտի 19-ի իրենց ընդհանուր յայտարարութեամբ կամեցան ցոյց տալ, որ երկպետեան դաշնակցութեան գործողութիւնները չեն սահմանափակւում միմիայն Եւրոպայով, այլ որ տարածւում են նաև հեռաւոր Ասիայի խնդիրների վրայ։

Այնուամենայնիւ, չնայած հանդիսաւոր ու յաճախակի ծանուցումներին՝ տարակոյս չկայ, որ „երկու բարեկամ ու դաշնակից“ ազգերի յարաբերութիւնները զգալի կերպով պաղում են հետզհետէ։ Վերջին երկու փոխադարձ այցելութիւնները շատ անհրապոյր էին։ Չկայ նախկին խանդավառութիւնը։ Չկայ մանաւանդ Ֆրանսիայում։ Ֆրանսիական նացիոնալիստները այլ բան էին սպասում հռչակաւոր „ալլիանսից“։ Նրանց ակնկալութիւնները չ՚արդարացան։ Ցարի կառավարութիւնը ոչ միայն լսել չի ուզում „բէվանշ“-ի մասին, ոչ միայն ամէն առթիւ իր բարեկամական զգացմունքներն է յայտնում Ֆրանսիայի երդւեալ թշնամուն, այլ բնաւ տրամադրութիւն իսկ չի ցոյց տալիս օգնութեան գալու իր զինակցին, անգամ երբ վերջինս ծանր բոպէներ է ապրում։ Ապացոյց Ֆաշոդան։

Նոյնպէս և անցեալ տարւայ ֆրանս-թիւրքական ընդհարումի ժամանակ Ռուսաստանի բռնած դիրքը զայրոյթ միայն յարուցեց ֆրանսիացիների մէջ։ Այն միջոցին, երբ հանրային կարծիքը Ֆրանսիայում՝ խորը յուզւած Հայաստանի մէջ կատարւող գազանութիւններից՝ պահանջում

էր կառավարութիւնից միջամտել նաև յօգուտ հայերի և նոյնիսկ դարձնել հայկական հարցը ընդհարումի կենտրօնական խնդիր—այդ նոյն միջոցին Ռուսաստանը երկիւղ կրելով „հայկական ռէֆօրմների“ ուրականից՝ շտապեց կանգնեցնել Ֆրանսիայի սլացքը և քաղաքավարի կերպով հեռացրեց ֆրանսիական նաւատորմը Միտիլենից։

Այս, ժամանակակից առաջադէմ ու ողջամիտ Ֆրանսիան միշտ աւելի և աւելի գալիս է այն գիտակցութեան՝ որ հայրենիքը համեմատաբար քիչ բան է վաստակում „ալլիանսից“ և շատ զոհողութիւններ է անում նրան։ Միշտ աւելի և աւելի աճում է Ֆրանսիայում մի որոշ հոսանք—կազմուած սոցիալիստներից, արմատականներից և նոյնիսկ “կենտրօնի“ մի մասից — որը եթէ իր ամբողջութեամբ հակառակ էլ չէ ֆրանս-ռուսական զինակցութեան, յամենայն դէպս պահանջում է այդ զինակցութիւնից՝ յարգել դիւցազնական հայրենիքի տրագիցիաները, յարգել ճնշուած ազգերի դատը, թոյլ չտալ որ յանուն „ալլիանսի“ մի ամբողջ ժողովուրդ խողխողուի արևելեան բռնաւորների ձեռքով և կամ անվերջ գալարի չարչարանքի անկողնի վրայ։.

Այդ հոսանքը վերջին ընտրութիւններից յետոյ, կարելի է ասել, տիրապետող է պարլամենտի մէջ։

Այդ հոսանքի արտայայտիչն է և կամ յամենայն դէպս նրա ճնշման տակ է արտաքին գործերի մինիստր Դելկասէ, որը ամէն առթիւ պատրաստականութիւն է յայտնում—նոյնիսկ Ռուսաստանին գրգռելու վտանգով—միջամտել ինպաստ հայերի և արգելք լինել նորանոր ջարդերին։

* * *

Երեքպետեան դաշնակցութիւնը շատ խօսակցութիւնների նիւթ եղաւ վերջերս։ Այս տարի չորորդ անգամն է նա վերանորոգւում։ Հրապարակի վրայ շրջում էին աննպաստ լուրեր, պեսսիմիստ մարգարէութիւններ։ Վերջին ժամանակներս այդ դաշնակցութեան անդամները ևս բաւականաչափ պաղել էին իրարից։ Արդէն առաջներում էլ շատ կենդանի չէր նրանց համերաշխութիւնը։

Սլավօն տարրը, որ աւստրիական քաղաքականութեան կարևորագոյն գործօններից մինն է, չի հաշտւում պանգերմանիզմի հետ, որը ամէն կերպ խրախուսւում է Գերմանիայի կողմից։

Պրուսսիան — երեքպետեան դաշնակցութեան ղեկավարը — միմիայն ատելութիւն է շարժում չեխերի և լեհերի մէջ իր հակասլավօնական քաղաքականութեամբ։ Ամբողջ լուսաւոր աշխարհը նողկանքով լսեց Վիլհելմ կայսրի Մարիէնբուրգում արտասանած ճառը, որ արքայական սանկցիա էր տալիս ազգայնական հալածանքներին։

Աւստրիայի սլավօնները յուզեցին. պարլամենտը փոթորկւեց. տեղի ունեցան միջադէպեր, որոնց նմանը չէր տեսնուած պարլամենտական տարեգրութեան մէջ։ Ռայխսրատի ամբիօնից չեխ պատգամաւոր Կլօփաչ միանգամայն իրաւացի զայրագնութեամբ, մոլեգին ոճով նշաւակեց դաշնակից Գերմանիայի վեհապետին և որակեց Մարիէնբուրգի ճառը անմիտ, անամօթ ու նման ածականներով։

Բացի պանգերմանիզմի պրօպագանդից կան տնտեսական և ուրիշ կարգի խնդիրներ ևս, որոնք թուլացնում են երկու պետութիւնների փոխադարձ վստահութիւնը, ստեղծելով ներքին տարաձայնութիւններ։ Իտալիայի և իր նախկին դահիճ՝ Աւստրիայի յարաբերութիւնները երբէք անկեղծ-բարեկամական շեշտ չեն կրել։ Աւանդական անտագօնիզմին աւելանում է և երկու պետութիւնների շահերի ու ձգտումների հակառակութիւնը Բալկաններում։ Իտալիան աչք է դրել Բալկանեան թերակղզու արևելեան մասի վրայ. իտալական պրօպագանդը ամենայն եռանդով առաջ է մղւում Ալբանիայի մէջ և վտանգաւոր մրցակից է հանդիսանում աւստրիական պրօպագանդին։

Չնայած, սակայն, այդ բոլոր հակառակութիւններին՝ Հռովմի, Վիէննայի և Բերլինի դիւանագէտները բնաւ ցանկութիւն չունին քայքայելու երեքպետեան դաշնակցութիւնը և երեք պետութիւնների ներկայացուցիչները մին միւսի ետևից հանդիսաւոր կերպով շեշտեցին այդ դաշնակցութեան նպատակայարմարութիւնը։

Պէտք է նկատել, որ երկու խոշոր դաշնակցութիւնները, որոնք կազմակերպում ու դիսցիպլինի են ենթարկում ցամաքային ուժերը՝ չեն արտաքսում կողմնակի, լրացուցիչ դաշնակցութիւններ, որոնց ազդեցութիւնը տարածւում է յայտնի շրջանների վրայ։ Ոչ ոքի համար գաղտնիք չէ այն դաշինքը, որ կապւած է 1897-ին Աւստրիայի և Ռուսաստանի միջև և որի նպատակն է՝ ապահովել statu quo ն Բալկաններում։ Քիչ առաջ այդ դաշինքը վերանորոգւեց և հետևողականութեամբ գործադրւում է՝ մշտապէս ալէկոծւող մի այնպիսի վայրում, որպիսին է Բալկանեան թերակղզին։

Ոչ ոքի համար գաղտնիք չէ նմանապէս այն բախտաւոր մերձեցումը, որ առաջ եկաւ վերջին ժամանակներում Ֆրանսիայի և Իտալիայի միջև — երկու քոյր ազգութիւններ, որոնք կոչւած են համերաշխ գործելու և որոնց բաժանել էին անցեալի թիւրիմացութիւնները։

Այդ մերձեցումը, որ ժամանակակից պատմութեան ամենածանրակշիռ անցքերից մէկն է դիտւում, նպատակ ունի առաջ մղել երկու լատին պետութիւնների շահերը Միջերկրականում։

Այդպիսով զինակցութիւնները միշտ աւելի և աւելի փոխարինում են կղզիացած վիճակին և տանջւած մարդկութիւնը կարող է թերևս յուսալ, որ եւրօպական յարաճուն հաւասարակշռութիւնը կը կարողանայ մի կողմից՝ քայլ առ քայլ մեղմել սպառազէն խաղաղութեան սարսափները, միւս կողմից լուծում տալ—խաղաղ ճանապարհով, առանց ընդհարումների — այն բոլոր խնդիրներին, որոնք մշտնջենաբար փոթորկում են Արևելքը։

ՀԱՅԱՍԷՐ ՊՐՕՊԱԳԱՆԴԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(ՆԱՄԱԿ ԲԵՐԼԻՆԻՑ)

Մխիթարական մի երևոյթ է, որ հետզհետէ հայոց դատի շուրջը համախմբւում՝ են ականաւոր եւրօպացիներ, որոնք աշխատում են գէթ մասամբ թեթևացնել հայ ժողովրդի տառապանքները և նպաստել հայկական արդար պահանջների իրագործման։

Եսական ու նիւթապաշտ են գերմանացիները. նրանց ամբողջ պատմութեան մէջ չէք տեսնում մի դէպք, որի հիմքը լինէր մարդասիրութիւնը, չէք յիշում մի զոհաբերութիւն, որի նպատակը լինէր այս կամ այն ճնշ-

ւած ազգութեանը ազատութիւն պարգևել։ Գերմանիան սկզբից մինչև վերջ եղել է դաժան՝ թույլերի դիմաց և այդ նոյն դաժանութիւնը նա պահպանել է նաև հայերի վերաբերմամբ։ Ապացոյց վերջին տարիների արիւնոտ անցքերը և Գերմանիայի բռնած ընթացքը... „Պոմերանեան մի զինուորի ոսկորները չեմ փոխիլ ամբողջ հայութեան հետ“, ասում էր Բիսմարկ, և Գերմանիան մինչև օրս էլ հաւատարիմ է մնացել այդ անսիրտ դաւանանքին։

Սակայն հասարակական կարծիքը թէև խիստ դանդաղ, թեքւում է հետզհետէ դէպի հայերի կողմը։ Հայ ժողովրդի տառապանքները և հայ յեղափոխականների անձնազոհ ու հերոսական գործողութիւնները սկսում են արձագանք գտնել նաև գերմանական սրտերում։ Հայասէր պրոպագանդը այստեղ ևս կամաց-կամաց հարթում է իր ճանապարհը։ Այդ ուրախալի երևոյթի նոր ապացոյցը կարելի է դիտել ամսոյս 6-ին և 26-ին Բերլինում տեղի ունեցած „հայկական երեկոյթը“ և հռչակաւոր Բերնշտայնի հրապարակական բանախօսութիւնը հայոց հարցի մասին։

I

Հայկական երեկոյթը տեղի ունեցաւ „Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան“ նախաձեռնութեամբ Բերլինի յայտնի Germania դահլիճում։ Ամէն ջանք գործ էր դրուած՝ այդ առաջին երեկոյթը գերմանացիների համար հետաքրքիր ու գրաւիչ դարձնելու և միևնոյն ժամանակ նրա միջոցով հայոց անցեալի ու ներկայի մի ամփոփ պատկերը տալու։

Այդ ջանքերը պսակեցին կատարեալ աջողութեամբ. ներկայ էր մեծ բազմութիւն ամենաընտիր հասարակութիւնից. աչքի էին ընկնում տաճեակներով պրոֆէսորներ, ռայխստագի անդամներ, հրապարակախօսներ և ուրիշ հասարակական գործիչներ։ Երեկոյթին մասնակցում էին աչքի ընկնող ուժեր գիտական ու երաժշտական շրջաններից, օրինակ. պրոֆ. Հարնակ, պրոֆ. Հալեր, դօքտ. Լեպսիուս, դօքտ. Ռօրբախ, կայսերական օպերայի երգչուհի Դեստինն, նկարիչ Նատէլ և ևն։

Երգեցին նախ ազգային ու ժողովրդական երգեր, տրուեցին կենդանի պատկերներ, խօսեցին ճառեր։

Առաջին ճառախօսն էր աշխարհահռչակ գիտնական պրոֆ. Հարնակ, որը հակիրճ ներկայացրեց հայոց եկեղեցու պատմութիւնն ու էութիւնը, շեշտելով գլխաւորապէս այն փաստը, որ հայերը կուլտուրական մի ժողովուրդ են, որը ամենից առաջ իբրև ազգային ամբողջութիւն՝ ընդունել է քրիստոնէութիւնը և երկար ու ձիգ դարերի ընթացքում կռիւ է մղել իր լեզուն, կրօնը և ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար։

Դօքտ. Լեպսիուս, յայտնի գրքի հեղինակը խօսեց հայերի կուլտուրական դերի մասին Արևելքում. երկար ծանրացաւ Հայաստանը բարեկարգելու անհրաժեշտութեան վրայ, ցոյց տուեց այն մեծ, անգնահատելի ծառայութիւնները, որ կարող են անել հայերը գերմանացիներին, սրանց խոշոր ձեռնարկութիւնների մէջ Արևելքում։ Անատոլիայի երկաթուղին շինող ինժիներները միաբերան վկայում են, որ այդ գործի մէջ ամենաընդունակ աշխատաւորները հայեր են եղել։ Ուստի և—եզրափակեց համակրելի ճառախօսը—հայերը միանգամայն արժանի են Գերմանիայի հովանաւորութեանը։

Դօքտ. Ռօրբախ, որ 3-4 անգամ ճանապարհորդել է Փոքր Ասիայում և լաւ ճանաչում է հայ ժողովրդին, համառօտակի ուրուագծեց հայի նահապետական կեանքը, նիստ ու կացը և շեշտեց այն միտքը, որ հայերը գլխաւորապէս երկրագործ ժողովուրդ են, աշխատասէր և ընդունակ։

Բերլինի բազմաթիւ լրագիրներ յօդուածներ նուիրեցին երեկոյթին, դրատեցին հայ ուսանողների հայրենասիրութիւնը և շեշտեցին իրենց համակրանքը դէպի հայ ժողովրդի դատը։

II

Յունիսի 26-ին երեկոյեան մօտ 3,000 հանդիսականների առաջ Էդուարտ Բերնշտայն սկսեց իր բանախօսութիւնը։ Նրան լսում էին ամենախորին ուշադրութեամբ. Բերնշտայն այն սակաւաթիւ գլուխներից է, որոնք հասարակական-քաղաքական ամէն մի կնճռոտ պրօբլեմի հանդէպ անհրաժեշտ են սեպում՝ զինուել նախ և առաջ գիտական մտքին յատուկ մեթոդով, սեղմ, անողոք տրամաբանութեամբ և միանգամայն անաչառութեամբ։ Տաճկա-հայկական մթնոլորտում նշմարուող ամէն մի խոշոր երևոյթ նա համեմատութեան էր դնում նոյն կարգի երևոյթների հետ՝ արևմտեան կեանքի անցեալում ու ներկայում։ Իրականութեան չոր ու պաղարիւն վերլուծումը տեղի էր տալիս երբեմնապէս զգայուն սրտի ցասման արտայայտութիւններին, երբ հարկաւոր էր իտես դնել հայկական մարտիրոսութեան աղեխարշ էջերը և կամ նշաւակել Բիւլովի անարգ քաղաքականութիւնը։

„Հայ ժողովրդին մենք չենք ճանաչում“—այսպէս սկսեց Բերնշտայն։ Նա հեռու է միջազգային հաղորդակցութիւնից և սրանից քիչ առաջ շատ շատերը եւրոպացիներից գաղափար անգամ չունէին նրա գոյութեան մասին։ Բայց հայ ժողովուրդը շատ հետաքրքրական է մեզ համար. հայկական հարցը մի մասն է արևելեան մեծ խնդրի, որը դեռ պիտի շարունակէ խռովել միջազգային խաղաղութիւնը։ Թիւրքիայի ամբողջ վարչական սիստէմը մահ է միայն բերում հպատակ ժողովուրդներին, Թիւրք ցեղը չի թողնում, որ ուրիշ ցեղերը առաջ գնան, որ առհասարակ կուլտուրան առաջ ընթանայ։ Նա աւերում է Հայաստանի պէս վայրերը, որոնք դրախտ կարող էին դառնալ։ Որո՞նք են արդեօք Թիւրք ժողովրդի „լաւ յատկութիւնները“, որ ոմանք շեշտում են յաճախ։ Նաճող ազնւականութեան բարբարոս յատկութիւններն են դրանք — և ուրիշ ոչինչ։

Եթէ այլևայլ ցեղեր Թիւրքաց հպատակութեան տակ դարերի ընթացքում պահպանել են իրենց կրօնը և ազգայնական ստացուածքները — դա ապացոյց չէ տաճկական համբերողութեան, այլ միայն այն փաստի՝ որ Թիւրք ցեղը իբրև նուաճող տարր՝ անընդունակ է եղել մարսել այլազգաւան տարրերը։ Կայսերական-պապական բռնապետութիւն է Թիւրքիան. սուլթանը՝ նրա աշխարհական և միանգամայն կրօնական գլուխը։ Այդ իրողութեան վրայ է կառուցուած ամբողջ Տաճկաստանը և դրանից է հետևում այն բացարձակ թշնամական դիրքը, որ բռնած է սուլթանը և առհասարակ մահմէտականները դէպի ամէն քաղաքական առաջադիմութիւն։

Ճնշումը արտադրում է հակաճնշում։ Եւ հէնց որ մի ոևէ քրիստոնեայ ժողովուրդ ապստամբում է, հէնց որ յեղափոխական կոմիտէներ են կազմակերպւում՝ ազ-

գային ազատութեան գործը առաջ մղելու համար, վրայ են հասնում արիւնոտ ջարդեր, անգէն ու անմեղ մասսայի կոտորած... Այդպէս էր Յունաստում, Մոլդավ-Վալախիայում, Լիբանանում, Սերբիայում ու Բոլգարիայում. այդպէս էր Հայաստանում“...

Բերնշտայն երկարօրէն ծանրացաւ Հայաստանի ներկայ վիճակի վրայ, նկարագրեց հայ ժողովրդի տնտեսական ու սօցիալական ծանր պայմանները՝ հարկային սիստէմը, փաշայական կամայականութիւնները, սովը, կառավարչական տէռօրը: Եւրոպան անտարբեր էր մնում նոյնիսկ ահռելի ջարդերի միջոցին և ահա հարազատ ժողովրդի յուսակտուր վիճակը տեսնելով՝ հայ յեղափոխականները մի թափով գրաւեցին Օսմանեան բանկը: Ոչ ոքի չսպանեցին, այլ միայն ամրացան բանկի մէջ՝ Եւրոպային հարկադրելու համար: Դրան հետևեց դարձեալ կոտորած Պօլսում...

Բերնշտայն միաժամանակ խօսեց և պետութիւնների յարաբերութիւնների մասին, որոնք պայմանաւորել են հայկական ճգնաժամի ընթացքը. շեշտեց միջազգային սօցիալ-դէմօկրատիայի դերը հայկական խնդրում և իվերջոյ մի տաք, կորովի կոչ ուղղեց հանդիսականներին:

„Մեզ այժմ հնարաւորութիւն է տրուած մեր ձայնը բարձրացնելու յօգուտ մի ժողովրդի, որի դէմ դանդաղ, բայց յամառ կերպով մղւում է բնաջնջման կռիւը և ես յոյս ունեմ, որ ոչ մէկը չի գտնւի ձեր մէջ, որը չմտածէ, թէ մի անգամ ընդ միշտ պէտք է վերջ դնել Թիւրքիայում տիրող յոռի տնտեսութեան... Հնչեցնենք մեր բողոքի ձայնը և այնքան բարձր հնչեցնենք, որ նրա արձագանքները հասնեն պետական կանցլերի ականջին: Հայերին պէտք է օգնութիւն տրւի. սուլթանական անարգ ռէժիմը պէտք է անհետանայ աշխարհի երեսից“...

Դասախօսութիւնը շուտով լոյս պիտի տեսնի գերմաներէն լեզւով: „Եւրօպ. Հայ. Ուսանող. Միութիւնը“, որ այդ կոնֆէրանսի նախաձեռնողն էր, մտադիր է նոյնը հրատարակել ֆրանսերէն և հայերէն:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՐԻՒՍԷԼԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

—

·Ն Ֆրանս հետևեալ կոչն է հրատարակել „Պրո Ար-
Անատօ ·ւի“ № 13-ում Բրիւսէլի համաժողովի առիթով, որ
մՆիա, ·եղի պիտի ունենայ յուլիսի 17-18-ին:
ա.

—

·րլամենտի, համալսարանների և բարձր
Դանիայում, պ· ·անդամներ՝ ինկատի առնելով հայ
հոգևորականութեա· ·մեծ վտանգը, առաջարկել են
ժողովրդին սպառնացող ·հւն—„զուտ մարդասիրական,
հաստատել մի գործակցութ· ·ւթեան“ — բոլոր քաղա-
ռւանց քաղաքական բնաւոր· հոգեվարք ազգութեան:
բակրթւած ազգերի մէջ՝ ինպաստ · ·ւիլի 5-ին Պարիզում
Այդ նախաձեռնութեան վրայ՝ ապ· ·Մարսէլ Սամբայի,
միջազգային մի ժողով պպ. Էտկինի, ․ ·եամբ քւէար-
ժօրժ Բրանդէսի, դը Ռօբէրտիի ներկայութ·
կեց հետևեալ որոշումը.

„Ըստ կարելւոյն շուտ, տեղի պիտի ունենա· ·յ բոլոր ·ի մի
երկրների մէջ գտնւող՝ Հայաստանի բարեկամին,
խորհրդաժողով“:

Ուստի և Եւրօպայի բոլոր երկրներից նշանաւոր մարդիկ պիտի գումարւին Բրիւսէլում մի համաժողովի մէջ առաջիկայ յուլիսին, որպէս զի բարձրաձայն լսելի անեն բողոքը՝ դադարած տեսնել վերջապէս հայերի կրած հալածանքները:

Ժամանակը սուղ է: Ջօրանոցները բարձրանում են Զէյթունում և Սասունում: Ազդարարում են նոր գըրգըռումների մասին:

Զարհուրելի ամիսները մօտենում են: Յուլիսից մինչև հոկտեմբերն են կատարւում ջարդերը:

Մարտիրոս ժողովրդի մնացորդները կարելի է փրկել միայն բոլոր կուսակցութիւնների պատկանող մարդկանց միջազգային համաձայնութեամբ: Այդ համաձայնութիւնը ապահովւած է:

Ֆրանսիայում՝ Դընի Կօշէն ու Ժօռէս, Հօլլանդիայում՝ դօքտօր Կիւպեր և Վան Կօլ միացած են հայերին պաշտպանելու համար:

Մենք թախանձում ենք բոլոր այն մարդկանց, որոնք ունեն իրենց սրտում սէր դէպի մարդկային ցեղը՝ յարել Բրիւսէլի հայասէր Կոնգրէսին և մեծացնել վեհանձն ձայները, որոնք պիտի հնչեցնեն Եւրօպայի կառավարութիւնների և աշխարհի քաղաքացիների ականջին ամենաարդար գանգատը, որ երբևիցէ մի ժողովուրդ արձակել է երկրի վրայ:

ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍ

—

Temps-ի մէջ (յունիս 29) կարդում ենք.

«Յուլիսի 17-ին և 18-ին պիտի գումարւի Բրիւսէլում հայասէրների միջազգային համաժողովը: Բոլոր կուսակցութիւնների, բոլոր կրօնների և փիլիսոփայական շկօլաների պատկանող մարդիկ յայտնել են իրենց կողմնակցութիւնը: Ընդհանուր խորհրդակցութեամբ նրանք փնտրելու են գործնական միջոցներ՝ ազդելու եւրօպական կառավարութիւնների ու հանրային կարծիքի վրայ և շահագրգռելու նրանց հայկական հարցով: Ահա մի շարք ականաւոր կողմնակիցների անունները.

ԳԵՐՄԱՆԻԱ. — Ա. Բէբէլ, Է. Բէրնշտայն, Ռայխստագի անդամներ, Ա. Ֆրիդ, պրօֆ. Պ. Մայէր, դօքտ. Ա. Ռիխտէր ևլն: ԱՆԳԼԻԱ. — Տիկ. Ս. Ֆրիդ. Կամէնտիչ, պարլամէնտի անդամներ՝ Ջեմս Բրայս, Ջօն Բեօրնս, Սիր Ջօն Կեննեվէյ, Ռօբեր Ռայդ, Ս. Շվան, Ժ. Ստեֆենսն ևլն: ԱՒՍՏՐԻԱ. — Տիկ. և պ. Զուտներ: ԲԵԼԳԻԱ. — Կոմսուհի Շտայնլէն-Զալշտայն, պետական մինիստր Լեժեօն, սենատօրներ՝ Հուգօ դը Լեօհէ, Հ. Լաֆօնտէն, Սըլի-Լօնշան, պարլամենտի անդամներ՝ Դեստրէ, Պօլ Յանսօն, Է. Վանդերվելդ, պրօֆէսօրներ՝ Հեկտօր Դընի, Է. Նիս ևլն: ԴԱՆԻԱ. — դը Շեստեդ, Ժօրժ Բրանդէս ևլն: ՖՐԱՆՍԻԱ. — Ակադէմիայի անդամներ՝ Անատօլ Ֆրանս, Լավիս, կոմս դը Մէօն, Ժիւլ Լեմետր, Ինստիտուտի անդամներ՝ Ֆրեդերիկ Պասսի, Լուի Հավէ, Պօլ Մայէր, Միշէլ Բրէալ, Պօլ Վիօլլէ, Պաստեօրի Ինստիտուտի անդամներ՝ Է. Դիւկլօ, դօքտ. Ռու, սենատօրներ՝ Դրմօն, սենատի փոխնախագահը, Ժօրժ Կլէմանսօ, Դելպէշ, Է. Լարիշ ևլն, պարլամենտի անդամներ՝ Այնար, Դընի Կօշէն, Դ'Էստուռնէլ դը Կօնստան, Ֆլուրան, Ժան Ժօռէս, Կամիլ Պելտան, Ֆրանսիս դը Պրեսանսէ, Ռուանէ, Սամբա ևլն: ՀՕԼԱՆԴԻԱ. — Բարօնուհի Վասկլէվիչ, Ս. Ռիստէր, Ֆերվօլդ, դօքտ. Բարդ դը Լաֆայ, անդամ խաղաղութեան միջազգային բիւրօյի: ԻՏԱԼԻԱ. — Սենատօր Ասկօլի, պարլամենտի անդամ Էնրիկօ Ֆերրի, Է. Մօնետա, պրօֆէսօրներ՝ Մանգատտօ և Սցիպիօն Գիմմի ևլն: ՌՈՒՍԱՍՏԱՆ. — Է. դը Ռօբէրտի, պրօֆ. Գամբարօվ, Սեմենօվ, „Նովօստի“-ի թղթակից ևլն ևլն»:

—

„Մարդկային իրաւունքների Դաշնակցութեան“ (*La Ligue des Droits de l'homme*) Բրեստի ճիւղը յունիս 14-ի իր ժողովում որոշել է.

1) Շնորհաւորել այն քաղաքացիներին, որոնք կազմակերպում են Բրիւսէլի համաժողովը հայկական խնդրով

գրաւելու համար. շնորհաւորել մասնաւորապէս պ. Պիէռ Քիառին, որը դարձել է ախոյեան այդ մարդկային դատի։

2) „Հրաւիրել Մարդկային Իրաւունքների Դաշնակցութեան“ կենտրոնական կօմիտէին ուղարկել մի ներկայացուցիչ Բրիւսէլի համաժողովին և խնդրել բոլոր տեղական ճիւղերին՝ արտայայտել միևնոյն ցանկութիւնը։

* * *

Քաղւածօրէն բերում ենք Temps-ի մի խմբագրականը՝ Orient վերնագրով.

«Կ. Պօլսի մէջ շարունակում են պտտել ամենաահաւոր շշուկներ՝ Թիւրք կայսրութեան որոշ մասերի վերաբերմամբ։ Արդէն մի քանի շաբաթից իվեր Սասունի եւ Մուշի ազգաբնակութիւնը ենթակայ է ոչ միայն անհանգստութեան, որը միանգամայն հասկանալի է դառնում չէրքէզների հօսանքի պատճառով, այլեւ ճնշողական գործողութիւնների, որոնց մէջ փորձառու ազգաբնակութիւնը տեսնում է ազդարարներ մի նոր փոթորկի։

Մարդիկ յուզւեցին արեւմուտքում՝ այդ յուսահատ ճիչերը լսելով. Ֆրանսիական մի քանի պատգամաւորներ՝ որ ներկայացուցիչ էին պարլամենտի բոլոր կուսակցութիւնների՝ ծայրագոյն ձախակողմից սկսած մինչեւ ծայրագոյն աջակողմ — միացած ընդհանուր մի ցանկութեան մէջ՝ ազատ պահել մարդկութիւնը սարսափելի եղեռնափորձի վերանորոգումից՝ դիմեցին Հանրապետութեան արտաքին գործերի մինիստրին եւ ազդարարելով սպառնացող վտանգի մասին՝ խորհուրդ տւին նրան ձեռք առնել որոշ միջոցներ, որոնք թէեւ շատ էլ ազդու չէին թւում նրանց, բայց գէթ նպատակ ունէին յայտնել ում հարկն է, Ֆրանսիայի միայուն ու գործօն համակրութիւնները։

Պ. Դելկասէ վերստին շեշտեց այն հոգատար ուշադրութիւնը, որով նա վերաբերւում է միշտ այնքան սուրբ մի դատին։

Մինիստրը պարտաւորւեց առժամեայ բաւարարութիւն տալ սարսափած ազգաբնակութեանը, անյապաղ Մուշ ուղարկելով Ֆրանսիայի կողմից մի ներկայացուցիչ, վկայ լինելու, թերեւս նաեւ սանձահարելու չէրքէզների ձեռնարկութիւնները։

Այդ դիտաւորութեան սոսկ հրատարակումը կարողացաւ փոքր ինչ հանգստացնել դժբախտներին, որոնք հարատեւ զգում են իրենց ենթակայ սուէ կիսաբարբարոսի քմահաճ հարւածներին։

Այդ տեսակէտից պէտք է ուրախ լինել միջադէպի համար։

Բայց նոյն միջոցին, երբ հօրիզօնը սկսւում է քիչ-չատ պարզւել Մեծ Հայաստանի մէջ, ամպերը բարձրանում են Կիլիկիայի եւ Տավրոսի կողմերում.

Զէյթունից, Հաճինից, Ադանայից, Սիսից ծանր ընդհարումների լուրեր են հասնում մեզ։ Ամենաահաւոր հանգամանքն այն է, որ Զէյթունի շրջակայ գիւղերում մահմէդականներին վառօդ, գնդակ եւ զէնք են բաժանում։ Դա քաղաքացիական մի կռիւ է, որ պատրաստւում է այդ վայրի քրիստոնեաների դէմ։ Հիմք կայ երկիւղ կրելու մի նոր եղեռնափորձից ընդդէմ Զէյթունի, այդ հպարտ միջնաբերդի, Տավրոսի բարձրութեան վրայ կանգնած հայկական այդ առաջապահակի, որը 1896-ին կարողացաւ երկու ամսւայ հերոսական եւ անյաղթելի դիմադրութիւն ցոյց տալ Լարիսայի յաղթող էդհէմ փաշային։

Զէյթունը, արծիւների այդ բոյնը, որ թառած է Տավրոսի բարձր ու անառիկ կատարին՝ ունի քրիստոնեայ մի քաջ ազգաբնակութիւն, ոտից գլուխ զինւած, մաքսանենգականապէս անվեհեր, վարժւած սերնդէ-սերունդ զէնք խաղացնելու։

Դա մի փառահեղ պատմութիւն է, մի տեսակ լեռնական եւ չինական դիւցազներգութիւն, որ խաղացել է այդ բարձունքների վրայ, ուր ազատութեան ոգին ու բարքերը, առանձին հայրենասիրութիւնը պահպանւել են անվթար, ինչպէս լեռնագագաթների կուսական ձիւները։ Մինչ սուրն ու հրացանը ձեռքին՝ զէյթունցիք կը իրենց արիւնով գնել են գրեթէ ազատ ապրելու իրաւունքը։

Բազմաթիւ ներդաշնակւող նշաններից երեւում է, որ մօտ ապագայում բանի փորձ պիտի արւի Հայաստանի այդ ամուր եւ ապահով վայրի դէմ։ Յուսանք, որ Եւրօպան կը կարողանայ այդ ձեռնարկի առաջն առնել եւ յիշեցնել թիւրքերին, որ հարկաւոր է մտնել վերջապէս ռէֆօրմների ճանապարհը։

Քաղաքակրթւած աշխարհի ուշադրութիւնը շուտով կուղղւի շառաչումով այդ խնդրի վրայ, որը ներկայի ամենածանր խնդիրներից մէկն է, շնորհիւ այն համաժողովի, որը պիտի կայանայ յուլիս ամսում Բրիւսէլի մէջ, ուր կը գումարւին—իրենց համակրանքը յայտնելու եւ գործնական առաջարկներ ձեւակերպելու համար — ոչ միայն բոլոր ազգերի ներկայացուցիչներ եւ պարլամենտների անդամներ, այլեւ ամէն տեսակ կարծիք դաւանող մարդիկ՝ ընկերավարութիւնից սկսած մինչեւ արքայականութիւն»։

* * *

Պարիզի Le Signal թերթը գրում է.

«Եթէ հաւատանք վերջերս հաղորդւած տեղեկութիւններին — եւ ոչ մի առիթ չկայ կասկածելու նրանց ճշմարտութեան մէջ — սուլթանը պատրաստւում է նոր կոտորածներ անել Եւրօպայի անտարբեր աչքի առջեւ. բանից դուրս է գալիս նոյնիսկ, որ Մեծ Մարդասպանը հրամայել է սկսել Սասունից, ուր սակայն դեռ կենդանի մնացած հայերը գիտեն, թէ ինչպէս պիտի մեռնել։ Շուտով ջարդերը կընդարձակւեն եւ արդէն ուշ կը լինի կանխելու. մի քանի ժամանակից յետոյ մարդասպանի հաշւով այլեւս հայ չպիտի մնայ։

Մեր արտաքին գործերի մինիստրը, որ միշտ երկիւղ է կրում, մի գուցէ եւրօպական բարդութիւններ առաջ գալով խանգարեն այն բախտաւոր անցքերի շարքը, որոնք սարօրինապէս հեշտացրել են նրա գործը դիւանատան մէջ,—մեր արտաքին գործերի մինիստրը պէտք է այս անգամ ձեռք առնէ կորովի միջոցներ՝ վիժեցնելու համար այդպիսի մի դաւադրութիւն։ Պ. Դելկասէ արդէն նախազգուշացրւած է այն դիմումով, որ արին պարլամենտի անդամներ պպ. Դընի Կօչէն, Ալբեր դը Մէօն, Պրեսանսէ եւ Ռայնարտ, որոնք միացել էին համերաշխութեան սքանչելի մի թափի մէջ՝ յօգուտ հալածական հայերի։ Եթէ այդ նախազգուշացումից յետոյ պ. մինիստրը ձգձգէ եւ ուշացնէ Ֆրանսիական մի գործակալի այն կողմերը ուղարկելը, որ նա խոստացել է, — ապա մենք իրաւունք կունենանք հաշիւ պահանջել նրանից թափւած արիւնի համար։ Նրա ստանձնած պատասխանատւութիւնը կը լինի ահագին եւ մենք այլեւս վստահութիւն չենք ունենայ նրա վրայ։

Պ. Դելկասէ իրաւունք ունի յիշեցնել Պօլսի Ֆրանսիական դեսպանին նրա պարտականութիւնը եւ պահանջել նրանից կորովի միջամտութիւն ինպաստ անմեղ զոհերի, որոնք աւելի հետաքրքիր են, քան պ. Կօնստանի սրտին մօտ գտնւող ձեռնարկութիւնները։ Մենք, նախազգուշացրւած լինելով, իրաւունք կունենանք խիստ հաշիւ պահանջել պ. Դելկասէից իր թերացումների համար, եթէ Քէ Դ'օրսէի պալատում փակւած՝ յամառութեամբ խցկէ իր ականջները դրսի աղմուկի դիմաց եւ թողնէ որ իր յանցանքով մի նոր ջարդ կատարւի»։

* * *

Վիեննայի Die Information յայտնի կիսապաշտօնական թերթին հաղորդում են Պօլսից (յունիս).

Ռուսաց հիւպատոս Տումանսկի, որ անցեալ աշնանից հաստատւել էր Մուշի կողմերում, անսպասելի կերպով հեռացաւ այդ շրջանից։ Թւում է թէ պ. հիւպատոսը մեծ աջողութիւններ չունեցաւ օրթօդօքսութիւնը տարածելու իր առաքելութեան մէջ։ Հիւպատոսի հեռանալուց

յետոյ խժդժութիւնները վերսկսեցին։ Ծեծ, թալան, բռնաբարութիւն։ Չէրքէզ գաղթականները գրաւել են դաշտը։ Կասկած չկայ, որ Սասունի դէմ յղացւում է մի սոսկալի դաւադրութիւն։ Սասունը այն լեռնային վայրերից մէկն է, ուր հայ ազգաբնակութիւնը պահպանել է իր հինաւուրց ռազմական բնազդումները։ Ինչպէս Զէյթունը Կիլիկիայում, ինչպէս Լիբանանը եւ Մօնտենեգրօն՝ Սասունը վաղուց իվեր կարողացել է պահպանել իր կիսանկախ գոյութիւնը՝ շարունակաբար կռիւ մղելով վայրենի-արիւնարբու հօրդաների դէմ։ Անցեալ տարի կառավարութիւնը փորձեց զօրանոցներ կանգնեցնել Սասնոյ բարձրութիւնների վրայ՝ սասունցիներին վերջնականապէս ընկճեցնելու համար։ Բայց [illegible] սասունցի կանայք յետ մղեցին թշնամուն։

Այս անգամ կառավարութիւնը որոշած է ըստ երեւոյթին բնաջինջ անել ըմբոստ սասունցիներին։ Տեղի կունենան, անտարակոյս, արիւնահեղ ընդհարումներ, որովհետեւ հպարտ լեռնականները չեն թողլ տայ ոչխարների պէս խողխողել իրենց։ Չպէտք է մոռանալ, որ հայ ապստամբների չէֆ՝ Անդրանիկը դեռ թագնուած մնում է Սասունի լեռներում»։

Նոյն թերթին հաղորդում են Պոլսից (յունիս).

«Ահաւոր լուրեր են հասնում Կիլիկիայից։ Կարմիր ու ճերմակ տէռորը թագաւորում է ամբողջ երկրի մէջ։ Հարկահանները տանջում են քրիստոնեայ ազգաբնակութիւնը։ Կամայականութիւններն ու սպանութիւնները սովորական բաներ են։ Բայց ամենածանրը այն է՝ որ կառավարութիւնը վառօդ ու փամփուշտ է բաժանում Զէյթունի շրջակայ գիւղերի մահմէդականներին։ Գուցէ նորից սկսուի գրոհը հերոսական Զէյթունի դէմ, որը վերջին ապստամբութեան միջոցին յետ էր մղել Լարիսայի հերոս Էդհէմ փաշայի զօրքերը։ Դա թւում է հաւանական։

Զէյթունցիք մի ճշմարիտ պատուհաս են Թիւրքայ կառավարութեան համար։ Ամրացած Տավրոսի անառիկ բարձունքների վրայ, ոտից ցգլուխ զինուած՝ նրանք դեռ 18-րդ դարի վերջերից սկսած՝ մշտնջենական կռիւներ են մղել սուլթանական զօրքերի դէմ։ Զէյթունցիք սիրահար են իրենց դարաւոր ազատութեան։ Աբդիւլ Համիդը, ինչ գնով էլ լինի, ուզում է խոնարհեցնել այդ կամակորներին։ Անկարող լինելով անել այդ բացարձակ պատերազմի միջոցով, նա ձգտում է զարտուղի ճանապարհներով անվնաս դարձնել զէյթունցիներին»։

* * *

Ալբանիան որ մինչեւ ցարդ Օսմանեան պետութեան ամենակարեւոր զինուորական ուժերէն մէկը կը նկատուէր, սկսած է սպառնական դիրք բռնել սուլթանական կառավարութեան դէմ եւ անկախութեան ձգտումներ ունենալ։ Ալբանիոյ մէջ աւելի եւ աւելի լսելի կը դառնան Պերլինի վեհաժողովին պատգամաւոր ալբանացի Վասօ փաշային նշանաբանը. „Զքիփտարէ փէր շքիփնիա“—Ալբանիան ալբանացիներուն։

Սկսած ըլլալով արտասահմանի մէջ այլեւայլ կոմիտական հաստատութիւններէն, որոնք ուժ կուտային իրենց ազատագրական գաղափարներուն, ալբանացիք վերջերս դիմեր են աւելի լուրջ միջոցներու. կազմեր են յեղափոխական ընկերութիւններ, հաստատեր են ազատ թերթեր։

Այդ ազգային շարժման նպաստող կարեւոր թերթերէն մէկն է „Ալբանիան“, որ երկու տարի է կը հրատարակէր Հռոմի մէջ թիւրքերէն եւ իտալերէն լեզուներով։ Վերջերս թիւրքաց դեսպանին դիմումներուն վրայ իտալական կառավարութիւնը ազդարարած ըլլալով թերթին խմբագրին, որ սուլթանի դէմ կծու լեզու չբանեցնէ, խմբագրութիւնը նախամեծար համարած է հեռանալ, քան փոխել իր թերթին ուղղութիւնը։

Այժմ թերթը սկսած է հրատարակուիլ Ժընեվի մէջ, Ֆրանսերէն եւ թիւրքերէն լեզուներով, աւելի յարձակողական եւ յեղափոխական բնաւորութեամբ։ Առաջին թիւը լոյս տեսած է արդէն, որուն մէջ թիւրքերէն յօդուած մը կայ „Մէշվէրէթի“-ի մոլեռանդ խմբագրին, սուլթանի անգիտակից գործիք, Ահմէդ Րիզայի դէմ։

„Ալբանիա“ թերթի կուսակցութեան քաղաքական պահանջներուն ծրագրի կարեւոր կէտերը ասոնք են.

1) Ալբանական բոլոր նահանգները մէկի վերածել.

2) Ընդհանուր կառավարիչը սուլթանէն ընտրուի եւ Պօլսոյ դեսպաններէն վաւերացուի.

3) Ազգային ժողով մը կազմուի, որ զբաղի ներքին վարչութիւնով.

4) Երկրին պահակազօրքը պիտի կազմուի քրիստոնեայ եւ մահմեդական ալբանացիներէ.

5) Ընդհանուր ներում բոլոր քաղաքական յանցանքներու համար դատապարտուած եւ աքսորուած ալբանացիներուն։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

ՔԱՐ կոմիտէից № 173 — Փէլիքս, Աւօ Մ., Թադ. X, Դարդից, Գ., Արծւիկ, Յս. Ն. 5-ական ռուբլի, Տիգօ Թ., Սօլօ, Արէմ, Ծերունի 3-ական, „Խօրօ“ 1. 30, Խաչագող 4, Կոյրին 1, Արծիւ 2. 50, Քեօսա 2, Որսորդ 2, Գուրգէն 3, Կաշի 7, Ծաղիկ 1. 40, Խոդէն 2. 30, X. 0. 50: Գումար 74 ռուբլի։

„Շիրակ“ խմբի միջոցով № 174 — 101 ռուբլի։

№ 175 — Օնէս, Համաս, Շ...Ն, Բախալ, Արտուր, Արմաւիր, X. մէկ-մէկ-ական ռուբլի, Օնէս. Մօղիս 2, Լիրա, Նկար, №№ 50-ական կոպէկ։ Գումար 10 ռ. 50 կոպէկ։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ՝

Ա. Յով. 5 ֆրանք, Ն. Մինաս 5. 15, Փարհատ 7. 50, ՄՕՆԼԻՒՆԱՅԻՑ 35, Պ. Խ. 5, ՓԱՐԻԶԻՑ՝ Մ. Մ. 45, Մ. Գ. 20, Ն. Մ. 9, Զատ. 10, Կատղած 5, Ա. Խ. 5, Աղբունի 2, Դոյում 1, Յիսուս 1, Վահան 2, Զ. Եղբայրք 4, Տ. Պ. 2, Ոմն 1, Արթագի 1, Խասգիւղ 2, Օհաննէսից 10, Միւնխէնի հայ ուսանողներից 110: Գումար 287 ֆրանք 65 սանթիմ:

ՊՐԱՅԼԱՒՅ (Ռումանիա) „Առիւծ“ խմբից՝ Գօնտ 6 ֆրանք, Զալատ 4, Զաւէն 4, Հրհատ 4, Սիսակ 5, Գաղրիկ 4, Սուրէն 10, Ատոմ 3, Ատէ 10, Խարս 5: Գումար 55 ֆրանք. (այս գումարից 2 ֆր. ծախս է արւած խմբի պէտքերի համար):

ՆԱՒԱՅԱՆԳՍՏԻ կեդր. կոմիտէն՝

ԳԱՂԹԱՎԱՅՐԻ Գետեզր գիւղից Ս. Գալքաբճեան 6 ռուբլի, Բաքէն Սիւնի 5, Տիրան եւ Արամ 5, Ս. Ս. Զոլաքեան 5, Ռ. Զոլաքեան 1: Գումար 22 ռուբլի:

Լ. Պ. կեդր. կոմիտէն՝

Ենթակայէն՝ իբր կանխավճար 3900 դահեկան:

ՎՐԷԺԻ կեդր. կոմիտէն՝

Հանգամանակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան Տասնամեակի առթիւ ՍՊԱՀԱՆ Յ.-ի միջոցով — Փէրվ 3 թուման, Բուրդ 2, Լ. Մ. 1, X. 2, Իէլքով 1. 5, Հայ 3, Զա..լ 1, Սէր 2, Կեցցեն 2, Փիրաթամ 1. 5, Ասլան 2, Աղմախլումայ 2, Գագիկ, Զոզան, Ոմն, Հուր, Քահնյ, Մեւքոն մէկ-մէկական, ՌԱՇՏԻՑ մի վիճակախաղից 25: Գումար 64 թուման:

ՀԱՄԱՆՂՈՒԼՈՒՑ՝ Վրէժ 30 ռուբլի, Պօղոս 5, Միրզայ 5, Էանց, Բաթը, Գրիգորեան, Ե.ը Ս., Տ. Վարդունի 3-ական, Մ. Մ. 5, Արազ 1, Մամադ, Զարգար, Յարութիւն, Տապար, Եղիշէ 2-ական: Գումար 71 ռուբլի:

ՍԱԲՋԻԱՐԻՑ՝ Պետրոս 100 ղրան, Սունէցի 50, Ղարատաղցի, Յովհաննէսեանց, Ոմն, Գողթնեցի, Մազկեարլի, Արազ, Հայ, Ոմն, Թառղան 20-ական, Դաւիթ քհ. 25, Զօրօղ 20, Պարսիկ ոմն 60, Սիւնեաց 30: Գումար 465 ղրան:

ԲԱԼԿԱՆԵԱՆ կեդր. կոմիտէն՝

Փիլիպէ. — Տ. Ս. Ք. 10 լէվ, „Շարէ“ կանանց խմբ. 108. 60, „Վրէժ“ խմբ. (յունվ. փետր. մարտ) 61, „Պուլկարացի Պետօ“ խմբ. 44, „Արեւելեան“ խմբ. 10. 50, „Հեթում-Գագիկ“ խմբ. 32, „Արամեան“ խմբ. 55. 50, Պուրկազի Մանամճիւղէն 200, Սիլիստրէ 218. 50, Գարա-բունարի „Պետօ“ խմբ. 80, „Սերոբ-Աղբիւր“ խմբ. 47, Գայաճըքի „Անձնուրաց“ խ. 58. 50, Ռուսճուքի ենթակոմիտէն 150, Ֆիլիբէի Դրնօվօի ազգայիններէ 15, Վառնայի Պահպանողականէն 1901-ին 100, Սուլինայի ենթակոմիտէն 361. 50 ոսկի ֆր.: Գումար 1190. 50 լէվ եւ 361. 50 ոսկի ֆրանք:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)